Աղյուսակ 5-ում տեսնում ենք, որ միասնական քննությունների առաջին փուլում ընդհանուր միջին միավորներից ցածր ցուցանիշներով առանձնացել են հատկապես միջնակարգ դպրոցները: Բարձր ցուցանիշների քանակով (8 առարկայից) առաջատարը եղել են վարժարանները: Ռուսաց լեզվի և ֆրանսերենի բացարձակ առավելագույն միջին միավորները (համապատասխանաբար՝ 9.8 և 16.3) արձանագրվել են ավագ դպրոցների 2022/23 ուստարվա շրջանավարտների արդյունքներում: Միջնակարգ դպրոցներում այդ ցուցանիշն արձանագրվել է աշխարհագրությունից (14.9) և ռուսաց լեզվից (9.8), վարժարաններում՝ մաթեմատիկայից (13.2) և գերմաներենից (13.6), կրթահամալիրներում՝ հայոց լեզու և հայ գրականությունից (12.7), քիմիայից (13.0) և ֆիզիկայից (15.3), ոչ պետական ուսումնական հաստատություններում՝ անգլերենից (16.0) և կենսաբանությունից (14.9), այլ ուսումնական հաստատություններում՝ հայոց պատմությունից (16.4):

Երկրորդ փուլում նույնպես ընդհանուր միջին միավորներից ցածր ցուցանիշներ են արձանագրվել առավելապես միջնակարգ դպրոցներում: Բարձր ցուցանիշների քանակով (10 առարկայից) առաջատարը եղել են ավագ դպրոցները: Աշխարհագրության, ռուսաց լեզվի և ֆրանսերենի բացարձակ առավելագույն միջին միավորները (համապատասխանաբար՝ 12.3, 11.1 և 15.1) արձանագրվել են ավագ դպրոցների շրջանավարտների արդյունքներում: Միջնակարգ դպրոցներում այդ ցուցանիշն արձանագրվել է աշխարհագրությունից (12.3), վարժարաններում՝ հայոց լեզու և հայ գրականությունից (13.3), անգլերենից (14.6), մաթեմատիկայից (12.9) ու գերմաներենից (14.5), կրթահամալիրներում՝ հայոց պատմությունից (14.6), կենսաբանությունից (14.0),

քիմիայից (14.0) և ֆիզիկայից (15.7):

Աղյուսակ 6-ում ներկայացված են միասնական քննությունների առաջին և երկրորդ փուլերում 1-ից ավելի մասնակից ունեցած և 18-20 միջակայքում միջին միավորներ արձանագրած հանրակթական ուսումնական հաստատությունները: Նշենք, որ այս դիտարկմամբ երրորդ փուլում բարձր միջին միավոր արձանագրվել է միայն քիմիայից (Երևանի թիվ 114 ավագ դպրոց):

**Աղյուսակ 6.** **Միասնական քննությունների առաջին և երկրորդ փուլերում 18-20 միջին միավորներ արձանագրած հանրակրթական ուսումնական հաստատությունները ըստ ՀՀ վարչատարածքային միավորների**

| Վարչատա-րածքային միավորը | Հանրակթական ուսումնական հաստատությունը | Շրջանավարտ-ների թիվը | Առաջին փուլ | | Երկրորդ փուլ | |
|---|---|---|---|---|---|---|
| | | | Մասնակից-ների թիվը | Միջին միավորը | Մասնակից-ների թիվը | Միջին միավորը |
| **Հայոց լեզու և հայ գրականություն** | | | | | | |
| Երևան | Թիվ 87 միջնակարգ դպրոց | 45 | 2 | 18,3 | | |
| Արարատ | Գետազատի միջնակարգ դպրոց | 17 | | | 3 | 19,1 |
| Շիրակ | Գեղանիստի միջնակարգ դպրոց | 5 | | | 2 | 19,0 |
| Արմավիր | Ջրարբիի միջնակարգ դպրոց | 15 | | | 2 | 18,9 |
| Գեղարքունիք | Վարսերի միջնակարգ դպրոց | 6 | | | 3 | 18,7 |
| Շիրակ | Լեռնակերտի միջնակարգ դպրոց | 11 | | | 3 | 18,4 |
| Արարատ | Պ. Սևակ գյուղի միջնակարգ դպրոց | 8 | | | 2 | 18,0 |
| **Անգլերեն** | | | | | | |
| Երևան | «Հայ ասպետ» կրթադաստիարակչական բարեգործական հիմնադրամ | 11 | 5 | 19,4 | | |
| Լոռի | Ստեփանավանի վարժարան | 43 | 10 | 18,6 | | |
| Շիրակ | Գյումրու թիվ 18 միջնակարգ դպրոց | 26 | 3 | 18,5 | | |
| Շիրակ | Մեղրաշենի միջնակարգ դպրոց | 5 | 2 | 18,4 | | |
| Արագածոտն | Զարինջայի միջնակարգ դպրոց | 9 | 2 | 18,4 | | |
| Գեղարքունիք | Լուսակունքի միջնակարգ դպրոց | 9 | 2 | 18,4 | | |
| Լոռի | Բազումի միջնակարգ դպրոց | 13 | 2 | 18,3 | | |
| Արարատ | Քաղցրաշենի միջնակարգ դպրոց | 22 | | | 3 | 18,6 |
| Արարատ | Սիսի միջնակարգ դպրոց | 13 | | | 3 | 18,3 |
| Արարատ | Պ. Սևակ գյուղի միջնակարգ դպրոց | 8 | | | 3 | 18,3 |
| **Մաթեմատիկա** | | | | | | |
| Արարատ | Նշավանի միջնակարգ դպրոց | 12 | | | 2 | 19,4 |
| Արմավիր | Տարոնիկի Գ.Գառնիկյանի անվան միջնակարգ դպրոց | 16 | | | 2 | 18,4 |
| **Հայոց պատմություն** | | | | | | |
| Շիրակ | «ՇՊՀ» հիմնադրամի ավագ դպրոց | 226 | 2 | 19.8 | | |

| Վարչատա-րածքային միավորը | Հանրակրթական ուսումնական հաստատությունը | Շրջանավարտ-ների թիվը | Առաջին փուլ | | Երկրորդ փուլ | |
|---|---|---|---|---|---|---|
| | | | Մասնակից-ների թիվը | Միջին միավորը | Մասնակից-ների թիվը | Միջին միավորը |
| Կոտայք | Հրազդանի թիվ 13 ավագ դպրոց | 100 | 2 | 19.4 | | |
| Կոտայք | Չարենցավանի ավագ դպրոց | 130 | 3 | 19.3 | | |
| Կոտայք | Հրազդանի թիվ 10 ավագ դպրոց | 96 | 6 | 19.2 | | |
| Կոտայք | Հրազդանի թիվ 1 ավագ դպրոց | 41 | 3 | 19.0 | | |
| Շիրակ | Հոռոմի միջնակարգ դպրոց | 11 | 2 | 18.6 | | |
| Սյունիք | Քաջարանի թիվ 2 միջնակարգ դպրոց | 43 | 2 | 18.5 | 2 | 18,0 |
| Շիրակ | Ոսկեհասկի միջնակարգ դպրոց | 12 | 3 | 18.4 | | |
| Սյունիք | Գորիսի թիվ 1 ավագ դպրոց | 77 | | | 2 | 19,3 |
| Երևան | ՀԱՊՀ Երևանի ավագ դպրոց | 299 | | | 2 | 18,6 |
| Լոռի | Ալավերդու թիվ 8 ավագ դպրոց | 26 | | | 2 | 18,5 |
| Կոտայք | Աբովյանի կրթահամալիր | 30 | | | 3 | 18,3 |
| Շիրակ | Մուսայելյանի միջնակարգ դպրոց | 14 | | | 3 | 18,3 |
| **Կենսաբանություն** | | | | | | |
| Գեղարքունիք | Երանոսի թիվ 1 միջնակարգ դպրոց | 18 | 2 | 19,4 | | |
| Գեղարքունիք | Վարդենիսի ավագ դպրոց | 39 | 4 | 18,3 | | |
| Կոտայք | Հրազդանի թիվ 10 ավագ դպրոց | 96 | 2 | 18,0 | | |
| Երևան | Թիվ 148 ավագ դպրոց | 120 | 2 | 18,0 | | |
| Կոտայք | Հրազդանի թիվ 1 ավագ դպրոց | 41 | | | 2 | 19,1 |
| **Քիմիա** | | | | | | |
| Տավուշ | Հաղարծինի միջնակարգ դպրոց | 46 | | | 2 | 18,1 |
| **Ֆիզիկա** | | | | | | |
| Տավուշ | Նոյեմբերյանի ավագ դպրոց | 39 | 2 | 18,6 | | |
| Արարատ | Այգեզարդի միջնակարգ դպրոց | 20 | 2 | 18,4 | | |
| Երևան | «Շիրակացու ճեմարան» միջազգային գիտակրթական համալիր | 104 | | | 2 | 19,0 |
| Երևան | «Հայ ասպետ» կրթադաստիարակչական բարեգործական հիմնադրամ | 11 | | | 3 | 18,9 |
| Կոտայք | Աբովյանի թիվ 4 ավագ դպրոց | 158 | | | 4 | 18,4 |

Հանրակրթական ուսումնական հաստատությունների կտրվածքով կատարված դիտարկմամբ պարզվել է, որ 2023 թ. միասնական քննությունների առաջին փուլում 18-20 միջակայքի միջին միավորներ են արձանագրվել առավելապես անգլերենից, հայոց պատմությունից, կենսաբանությունից, իսկ երկրորդ փուլում՝ հայոց լեզու և հայ գրականությունից, հայոց պատմությունից, մաթեմատիկայից, քիմիայից և ֆիզիկայից:

## 2.4. ԴԻՄՈՐԴՆԵՐԻ ՍԵՌԱՏԱՐԻՔԱՅԻՆ ԿԱԶՄԸ ԵՎ ՄԻՋԻՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԸ

2023 թ. ընդունելության քննությունների առաջին փուլին մասնակցելու համար հայտագրված 6856 դիմորդներից 2916-ը (42.5%) եղել են արական սեռի, 3940-ը (57.5%)՝ իգական սեռի: Նրանցից 5714-ը (3200 աղջիկ և 2514 տղա) 2022/2023 ուստարում սովորելիս են եղել 12-րդ դասարանում: Նախորդ տարվա՝ 2022 թ. շրջանավարտ է եղել 953 դիմորդ (13.9%)՝ 644-ը իգական, 309-ը՝ արական սեռի: 2023 թ. իգական սեռի դիմորդներից ամենաավագը եղել է 1955 թ., արական սեռինը՝ 1987 թ. ծնված:

Ընդունելության քննությունների երկրորդ և երրորդ փուլերում միասնական մեկ կամ երկու քննություն հանձնելու հայտ ներկայացրած 11800 դիմորդներից 6926-ը (58.7%) եղել են իգական սեռի, 4874-ը (41.3%) արական սեռի: Նրանցից 10796-ը (6344 աղջիկ և 4452 տղա) եղել են 2023 թ. շրջանավարտներ: 2022 թ. շրջանավարտ են եղել 428 աղջիկ և 234 տղա: Իգական սեռի դիմորդներից ամենաավագը եղել է 1972 թ., արական սեռինը՝ 1982 թ. ծնված:

Դիագրամ 4-ում ներկայացված է 2023 թ. միասնական քննությունների առաջին և երկրորդ փուլերին մասնակցելու նպատակով առնվազն մեկ միասնական քննություն հայտագրած դիմորդների սեռային կազմը՝ տոկոսային արտահայտմամբ:

**Դիագրամ 4. Միասնական քննություն հայտագրած դիմորդների սեռային կազմը (%)**




**Դիագրամ 5. Դիմորդների սեռատարիքային կազմը ըստ ծննդյան տարեթվի (%)**




Դիագրամներում տեսնում ենք, որ ընդունելության քննություններ հայտագրած դիմորդների մեծ մասը եղել են իգական սեռի ներկայացուցիչները: Ծննդյան տարեթվի ամենամեծ խումբը կազմել են 2005 թ. ծնվածները (դիագրամ 5): Նրանց մեջ նույնպես գերակշռող են եղել իգական սեռի ներկայացուցիչները: 2022/2023 ուստարվա շրջանավարտների խումբը կազմված է եղել 2005 և 2006 թթ. ծնված դիմորդներից:

Աղյուսակ 7-ում ըստ դիմորդների սեռերի ներկայացված են միասնական քննությունների մասնակիցների թվերը և միջին միավորները: Մգացված են յուրաքանչյուր քննության ընդհանուր միջին միավորը գերազանցող ցուցանիշների վանդակները:

**Աղյուսակ 7. 2023 թ. միասնական քննությունների միջին միավորները ըստ սեռի***

| Քննական առարկաներ | Փուլ | Իգական սեռ | | Արական սեռ | | Ընդհանուր միջին միավոր |
|---|---|---|---|---|---|---|
| | | մասնակից-ների թիվ | միջին միավոր | մասնակից-ների թիվ | միջին միավոր | |
| Հայոց լեզու և հայ գրականություն | 1-ին | 1511 | 11,5 | 457 | 8,7 | 10,8 |
| | 2-րդ | 3544 | 12,8 | 971 | 10,0 | 12,2 |
| | 3-րդ | 27 | 12,0 | 14 | 8,1 | 10,7 |
| Անգլերեն | 1-ին | 1909 | 13,6 | 1171 | 11,7 | 12,9 |
| | 2-րդ | 3462 | 13,9 | 2049 | 12,2 | 13,3 |
| | 3-րդ | 27 | 12,1 | 22 | 10,3 | 11,3 |
| Մաթեմատիկա | 1-ին | 1075 | 10,8 | 1809 | 10,2 | 10,5 |
| | 2-րդ | 2103 | 12,0 | 2912 | 11,0 | 11,4 |
| | 3-րդ | 13 | 9,8 | 37 | 9,3 | 9,4 |
| Հայոց պատմություն | 1-ին | 314 | 15,0 | 244 | 12,7 | 14,0 |
| | 2-րդ | 717 | 12,5 | 464 | 11,0 | 11,9 |
| | 3-րդ | 9 | 7,2 | 8 | 10,0 | 8,5 |
| Կենսաբանություն | 1-ին | 542 | 13,3 | 323 | 12,8 | 13,1 |
| | 2-րդ | 833 | 11,7 | 410 | 11,6 | 11,7 |
| | 3-րդ | 16 | 10,0 | 11 | 12,1 | 10,9 |
| Քիմիա | 1-ին | 447 | 10,1 | 271 | 10,0 | 10,1 |
| | 2-րդ | 749 | 11,6 | 429 | 11,2 | 11,4 |
| | 3-րդ | 14 | 10,6 | 16 | 11,9 | 11,3 |
| Ֆիզիկա | 1-ին | 117 | 12,4 | 425 | 10,7 | 11,1 |
| | 2-րդ | 282 | 13,2 | 817 | 11,8 | 12,1 |
| | 3-րդ | | | 9 | 10,1 | 10,1 |
| Աշխարհագրություն | 1-ին | 15 | 14,6 | 15 | 13,5 | 14,1 |
| | 2-րդ | 43 | 11,9 | 46 | 11,6 | 11,7 |
| Ռուսաց լեզու | 1-ին | 87 | 9,9 | 42 | 9,4 | 9,7 |
| | 2-րդ | 212 | 10,8 | 88 | 9,6 | 10,5 |
| | 3-րդ | 1 | 6,0 | 2 | 7,9 | 7,3 |
| Գերմաներեն | 1-ին | 21 | 12,5 | 5 | 10,8 | 12,1 |
| | 2-րդ | 47 | 13,8 | 8 | 13,2 | 13,7 |
| | 3-րդ | | | 1 | 5,25 | 5,25 |
| Ֆրանսերեն | 1-ին | 15 | 14,8 | 1 | 16,25 | 14,9 |
| | 2-րդ | 36 | 12,9 | 2 | 9,5 | 12,7 |
| Իտալերեն | 1-ին | 1 | 19,25 | | | 19,25 |
| | 2-րդ | 3 | 18,3 | | | 18,3 |
| Իսպաներեն | 1-ին | | | 1 | 16,75 | 16,75 |
| | 2-րդ | 1 | 18,5 | | | 18,5 |

*- Եթե քննությանը մասնակցել է 1 դիմորդ, ապա նրա ցուցանիշը չի համեմատվել միջին միավորի հետ:

Աղյուսակ 8-ից երևում է, որ առաջին և երկրորդ փուլերում իգական սեռի հավաքած միջին միավորները բարձր են եղել համապատասխան ընդհանուր միջին միավորներից և

արական սեռի հավաքած միջին միավորներից: Հանրակրթական դպրոցներում ուսումնասիրվող առարկաներից իգական սեռի դիմորդների հավաքած ամենաբարձր միջին միավորն արձանագրվել է հայոց պատմությունից (15,0), ամենացածրը՝ ռուսաց լեզվից (0,6), արական սեռինը, համապատասխանաբար, աշխարհագրությունից (13,5) ու ռուսաց լեզվից (7,9):

Արական սեռի միջին միավորներն ընդհանուր միջին միավորներից և իգական սեռի միջիններից բարձր են եղել միայն երրորդ փուլում (հայոց պատմությունից՝ 10.0, կենսաբանությունից՝ 12.0, քիմիայից՝ 11.9, ռուսաց լեզվից՝ 7.9):

## 3. ԹԵՍՏԵՐ ԵՎ ԹԵՍՏԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

Հայոց լեզվի և հայ գրականության, հայոց պատմության, մաթեմատիկայի և բնագիտական առարկաների թեստերը կազմված են եղել ընտրովի, կարճ պատասխանով առաջադրանքներից և պնդումների փնջերից, օտար լեզուներինը՝ ընտրովի և կարճ պատասխանով առաջադրանքներից: Թեստերի կառուցվածքի և գնահատման վերաբերյալ տեղեկությունները ներկայացված են հավելված 4-ում:

Աղյուսակ 8-ում ներկայացված են միասնական քննությունների առաջին և երկրորդ փուլերի թեստերի մասնակիցների թվերը, միջին միավորները, բարդության և հուսալիության գործակիցները:

Մասնակիցների փոքր թվի պատճառով աշխարհագրության, գերմաներենի, ֆրանսերենի, իսպաներենի և իտալերենի թեստերը որակական վերլուծության չեն ենթարկվել, քանի որ որակական բնութագրիչների գործակիցներն այդ դեպքում ճշգրիտ չէին լինի:

**Աղյուսակ 8. 2023 թ. միասնական քննությունների առաջին և երկրորդ փուլերի թեստերի միջին միավորը, բարդությունը[3] և հուսալիությունը[4]**

| Քննական առարկան | Թեստի համարը | Մասնակիցների թիվը | | Միջին միավորը | | Բարդության գործակիցը | | Հուսալիության գործակիցը | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | 1-ին փուլ | 2-րդ փուլ | 1-ին փուլ | 2-րդ փուլ | 1-ին փուլ | 2-րդ փուլ | 1-ին փուլ | 2-րդ փուլ |
| Հայոց լեզու և հայ գրակա-նություն | 1 | 497 | 1056 | 11,0 | 12,2 | 0,58 | 0,64 | 0,932 | 0,941 |
| | 2 | 493 | 1044 | 10,6 | 12,2 | 0,56 | 0,64 | 0,927 | 0,946 |
| | 3 | 489 | 1055 | 10,7 | 12,3 | 0,57 | 0,64 | 0,923 | 0,939 |
| | 4 | 489 | 1038 | 11,0 | 12,3 | 0,58 | 0,65 | 0,927 | 0,941 |
| Անգլերեն | 1 | 778 | 1358 | 13,1 | 13,0 | 0,65 | 0,65 | 0,964 | 0,960 |
| | 2 | 765 | 1343 | 12,7 | 13,7 | 0,64 | 0,69 | 0,962 | 0,963 |
| | 3 | 771 | 1348 | 13,1 | 12,8 | 0,65 | 0,64 | 0,966 | 0,959 |

[3] **Բարդություն:** Թեստը համարվում է շատ հեշտ, երբ բարդության գործակիցը (P) գտնվում է 0.9-1.0 սահմաններում: 0.75≤P≤0.89 սահմաններում թեստը հեշտ է, 0.30≤P≤0.74 սահմաններում՝ միջին բարդության, 0.20≤P≤0.29 սահմաններում՝ բարդ, P≤0.19 դեպքում՝ շատ բարդ:

[4] **Հուսալիություն:** Հուսալիության գործակցի՝ 0.7-ից մինչև 0.8 ընդունած արժեքների դեպքում թեստի հուսալիությունը համարվում է միջին, 0.8-ից մինչև 0.9 արժեքների դեպքում՝ ընդունելի, 0.9-ից մեծ արժեքների դեպքում՝ մեծ:

| Քննական առարկան | Թեստի համարը | Մասնակիցների թիվը | | Միջին միավորը | | Բարդության գործակիցը | | Հուսալիության գործակիցը | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | 1-ին փուլ | 2-րդ փուլ | 1-ին փուլ | 2-րդ փուլ | 1-ին փուլ | 2-րդ փուլ | 1-ին փուլ | 2-րդ փուլ |
| | 4 | 766 | 1321 | 12,6 | 13,5 | 0,63 | 0,67 | 0,963 | 0,962 |
| Մաթեմա-տիկա | 1 | 737 | 1220 | 10,7 | 11,3 | 0,58 | 0,61 | 0,940 | 0,932 |
| | 2 | 713 | 1218 | 10,3 | 11,5 | 0,56 | 0,62 | 0,936 | 0,936 |
| | 3 | 719 | 1200 | 10,7 | 11,7 | 0,58 | 0,63 | 0,940 | 0,938 |
| | 4 | 715 | 1210 | 10,3 | 11,3 | 0,57 | 0,61 | 0,936 | 0,942 |
| Հայոց պատ-մություն | 1 | 140 | 274 | 13,9 | 12,0 | 0,72 | 0,63 | 0,963 | 0,951 |
| | 2 | 142 | 266 | 14,4 | 12,1 | 0,74 | 0,64 | 0,957 | 0,957 |
| | 3 | 139 | 270 | 13,6 | 12,4 | 0,70 | 0,65 | 0,960 | 0,957 |
| | 4 | 136 | 274 | 14,1 | 12,4 | 0,73 | 0,65 | 0,958 | 0,957 |
| Կենսաբա-նություն | 1 | 222 | 288 | 13,0 | 11,6 | 0,67 | 0,61 | 0,966 | 0,958 |
| | 2 | 221 | 296 | 13,2 | 11,9 | 0,68 | 0,63 | 0,962 | 0,961 |
| | 3 | 216 | 285 | 13,0 | 11,6 | 0,67 | 0,61 | 0,964 | 0,957 |
| | 4 | 206 | 283 | 13,2 | 11,9 | 0,68 | 0,63 | 0,966 | 0,965 |
| Քիմիա | 1 | 184 | 282 | 9,0 | 12,0 | 0,49 | 0,62 | 0,961 | 0,965 |
| | 2 | 175 | 280 | 11,2 | 11,3 | 0,59 | 0,59 | 0,969 | 0,966 |
| | 3 | 176 | 281 | 9,9 | 11,2 | 0,54 | 0,58 | 0,963 | 0,957 |
| | 4 | 183 | 282 | 10,1 | 11,4 | 0,54 | 0,59 | 0,957 | 0,965 |
| Ֆիզիկա | 1 | 141 | 274 | 11,8 | 12,2 | 0,62 | 0,64 | 0,949 | 0,961 |
| | 2 | 135 | 268 | 10,5 | 11,9 | 0,56 | 0,62 | 0,966 | 0,962 |
| | 3 | 135 | 258 | 10,8 | 12,3 | 0,57 | 0,64 | 0,959 | 0,963 |
| | 4 | 132 | 257 | 11,0 | 12,4 | 0,59 | 0,64 | 0,965 | 0,963 |
| Ռուսաց լեզու | 1 | 35 | 74 | 9,1 | 10,9 | 0,46 | 0,54 | 0,940 | 0,933 |
| | 2 | 33 | 70 | 9,7 | 10,8 | 0,49 | 0,54 | 0,939 | 0,917 |
| | 3 | 32 | 71 | 10,2 | 10,1 | 0,51 | 0,50 | 0,954 | 0,922 |
| | 4 | 29 | 64 | 9,9 | 9,5 | 0,49 | 0,48 | 0,941 | 0,938 |

Դիտելով աղյուսակ 8-ի տվյալները՝ տեսնում ենք, որ երկրորդ փուլում նշված առարկաների քննություններին մասնակցած դիմորդների թիվը առաջին փուլի համեմատությամբ գրեթե կրկնապատկվել է, բացի կենսաբանության քննությունից: Առաջին փուլի համեմատությամբ նվազել են հայոց պատմության և կենսաբանության բոլոր թեստերի միջին միավորները: Դա նշանակում է, որ այդ քննությունների առաջին փուլին մասնակցել են այդ առարկաներից ավելի պատրաստված դիմորդները: Դրանով է բացատրվում նաև երկրորդ փուլում այդ առարկաների թեստերի բարդության գործակիցների նվազումը: Դրանով հանդերձ, աղյուսակում նշված բոլոր առարկաների երկու փուլերի միասնական քննությունների թեստերը եղել են միջին բարդության և ունեցել են հուսալիության մեծ գործակիցներ:

# II. ԲՈՒՀԵՐԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ՄՐՑՈՒՅԹԸ

## 4. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԲՈՒՀԵՐԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ՄՐՑՈՒՅԹԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

- *Հայտագրում*

2023-2024 ուսումնական տարվա համար ՀՀ կառավարության N 352-Ն որոշման (16 մարտի 2023 թ.) համաձայն բակալավրի կրթական ծրագրով ընդունելության նպատակով ԳԹԿ-ի կողմից կազմակերպվող մրցույթի ցանկում ընդգրկված բուհերին տրամադրվել են 2128 անվճար և 15984 վճարովի տեղեր:

2023 թ. բուհերի ընդունելության հիմնական փուլի մրցույթն անցկացվել է մեկ մասնագիտության (անվճար և վճարովի) հայտագրմամբ:

2023 թ. dimord.am կայքում բուհ և մասնագիտություն է հայտագրել 13314 դիմորդ (առանց ռազմական բուհերի 102 դիմորդների): Ընդունելության մրցույթին մասնակցելու համար նախատեսված երկու քննություններից առնվազն մեկ միասնական քննություն պահանջող մասնագիտություն է հայտագրել նրանցից 11005-ը (երկու միասնական քննություն՝ 10967 և մեկական միասնական և ներբուհական քննություն՝ 38 դիմորդ):

Մասնագիտություն հայտագրած դիմորդներից 13099-ն ընտրել են պետական, 221-ը՝ ոչ պետական բուհեր:

- *Ընդունելություն*

Բուհերի ընդունելության մրցույթը կազմակերպվել է երկու՝ հիմնական և լրացուցիչ փուլերով:

Հիմնական փուլի մրցույթի արդյունքները հրապարակվել են 2023 թ. հուլիսի 18-ին, լրացուցիչ փուլինը՝ հուլիսի 30-ին: Լրացուցիչ փուլի մրցույթն անցկացվել է հիմնական փուլի մրցույթի ժամանակ դրական գնահատականներով չընդունված դիմորդների համար: Նրանց հնարավորություն է տրվել հայտագրելու մեկ կամ ավելի բուհի՝ մինչև վեց մասնագիտություն, եթե այդ մասնագիտություններում (անվճար և վճարովի) առկա են եղել թափուր տեղեր:

Բուհերի ընդունելության մրցույթի հիմնական և լրացուցիչ փուլերի արդյունքում ընդունվել է 10201 (մասնագիտություն հայտագրածների 7 6 , 6 %-ը) դիմորդ:

Մրցույթի առաջին փուլում հայտագրված 13314 դիմորդներից ընդունվել է 9166-ը (հայտագրվածների 68,8%-ը, երկու փուլերի արդյունքում ընդունված 10201 դիմորդների 89,9%-ը): Երկրորդ փուլում (թափուր մնացած տեղերով) հայտագրվել է երկու քննություններից դրական միավորներ հավաքած և առաջին փուլում չընդունված 1099 դիմորդ, որոնցից ընդունվել է 1035-ը (հայտագրված 1099 դիմորդների 94,2%-ը, ընդունվածների 10,1%-ը):

Ուսուցման անվճար հիմունքներով ընդունվել է 1972 դիմորդ (1895-ը՝ առաջին փուլում, 77-ը՝ երկրորդում), վճարովի հիմունքներով՝ 8229-ը (7271-ը՝ առաջին փուլում, 958-ը՝ երկրորդում): Անվճար հիմունքներով ընդունված 1972 դիմորդներից 89-ն ընդունվել

են պահուստային տեղերով (արտոնություններով) և նպատակային պետական անվճար տեղերով (86-ն առաջին փուլում, 3-ը՝ երկրորդում)։ Վճարովի հիմունքներով ընդունված 8229 դիմորդներից պահուստային տեղերով ընդունվել են 38-ը (36-ն՝ առաջին փուլում, 2-ը՝ երկրորդում)։ Ընդհանուր հաշվով պահուստային տեղերով (արտոնություններով) ընդունվել է 102 դիմորդ, նպատակային պետական անվճար տեղերով՝ 25 (ընդամենը՝ 127 դիմորդ)։

Երկու միասնական քննությունների արդյունքներով բուհ է ընդունվել 8271 դիմորդ (81.1%) երկու ներբուհական քննությունների արդյունքներով՝ 1909-ը (18.7%), մեկ միասնական և մեկ ներբուհական քննությունների արդյունքներով՝ 21-ը (0.2%)։

Բուհերում հայտագրված 13314 դիմորդներից 13093-ը (98.3%) դիմել են պետական, 221-ը (1.7%)՝ ոչ պետական բուհեր։ Բուհ ընդունված 10201 դիմորդներից պետական բուհեր են ընդունվել 9997-ը (98%), ոչ պետական բուհեր՝ 204-ը (2%)։

Միասնական քննություններ հայտագրած դիմորդների թիվը միասնական քննություն պահանջող մասնագիտություն հայտագրածների թվից մեծ է, որովհետև նրանց մի մասը դիմել է բուհերի ընդունելության մրցույթի ցանկում չընդգրկված այլ բուհեր կամ նպատակ է ունեցել միասնական քննության արդյունքով որևէ բուհի հեռակա ուսուցման ընդունելության մրցույթին մասնակցելու։

## 4.1 2023 Թ. ՀԱՅՏԱԳՐՎԱԾ ԵՎ ԲՈՒՀ ԸՆԴՈՒՆՎԱԾ ԴԻՄՈՐԴՆԵՐԻ ԹՎԵՐԸ

**Աղյուսակ 9. 2023 թ. հայտագրված և ընդունված դիմորդների թիվն ըստ բուհերի**

| Բուհը | Հայտագրվածների թիվը | | Ընդունվածների թիվը | | |
|---|---|---|---|---|---|
| | Հիմնական փուլ | Լրացուցիչ փուլ | Հիմնական փուլ | Լրացուցիչ փուլ | Ընդամենը |
| ԵՊՀ | **3188** | 294 | 2152 | 208 | **2360** |
| ՀՊՏՀ | **1673** | 101 | 1116 | 71 | **1187** |
| ՀԱՊՀ (Երևան) | **1336** | 171 | 903 | 157 | **1060** |
| ԵՊԲՀ | **1042** | 103 | 668 | 53 | **721** |
| ԲՊՀ | **1015** | 111 | 833 | 129 | **962** |
| ՃՇՀԱՀ | **964** | 91 | 734 | 121 | **855** |
| ՀՊՄՀ | **778** | 19 | 505 | 35 | **540** |
| ՎՊՀ (Վանաձոր) | **401** | 9 | 285 | 9 | **294** |
| ՀՖԿՍՊԻ | **394** | 34 | 293 | 18 | **311** |
| ՀՌՀ (հայկական բաժանմունք) | **328** | 59 | 237 | 88 | **325** |
| ՇՊՀ (Գյումրի) | **317** | | 215 | | **215** |
| ԵՊՀ (Իջևան) | **216** | 7 | 154 | 7 | **161** |
| ԵԹԿՊԻ | **212** | | 122 | 1 | **123** |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| ՀԳՊԱ | **201** | 5 | 187 | 4 | **191** |
| ՀԱԱՀ | **168** | 1 | 54 | 4 | **58** |
| ՀՊՏՀ (Գյումրի) | **156** | 3 | 122 | 3 | **125** |
| ԵՊԿ | **171** | 15 | 123 | 13 | **136** |
| ՀԱՊՀ (Գյումրի) | **97** | 1 | 73 | 1 | **74** |
| ՀԱՊՀ (Վանաձոր) | **86** | 4 | 55 | 4 | **59** |
| ԳՊՀ (Գավառ) | **82** | 3 | 52 | 3 | **55** |
| ԳՊՀ (Գորիս) | **77** | | 45 | | **45** |
| ՀԱՊՀ (Կապան) | **69** | | 36 | | **36** |
| Հայկական բժշկական ինստիտուտ | **67** | 22 | 32 | 27 | **59** |
| ՀՀ ՊՆ Վ. Սարգսյանի անվան ՌՀ | **51** | | | | * |
| ՀՀ ՊՆ Մարշալ Ա. Խանփերյանցի անվան ՌԱՀ | **48** | | | | * |
| ՀԳՊԱ (Գյումրի) | **46** | 2 | 43 | 2 | **45** |
| «Եվրասիա» միջազգային համալսարան | **30** | 7 | 17 | 8 | **25** |
| ԵԹԿՊԻ (Գյումրի) | **30** | | 21 | 3 | **24** |
| Երևանի Մեսրոպ Մաշտոցի անվան համալսարան | **24** | | 20 | | **20** |
| Երևանի Գյուղատնտեսական համալսարան | **23** | | 15 | 1 | **16** |
| ԵՊԿ (Գյումրի) | **23** | 1 | 18 | 1 | **19** |
| ԵԹԿՊԻ (Վանաձոր) | **22** | | 13 | 2 | **15** |
| ԵՀՀ (Երևանի «Հայբուսակ» համալսարան) | **22** | 10 | 8 | 21 | **29** |
| Երևանի «Հյուսիսային» համալսարան | **11** | 1 | 2 | 1 | **3** |
| Էրեբունի բժշկական ակադեմիա | **8** | 3 | 2 | 10 | **12** |
| Եվրոպական համալսարան | **7** | 15 | 5 | 29 | **34** |
| «Մխիթար Գոշ» համալսարան | **7** | | | | |
| ԳՊՀ (Գյումրու «Պրոգրես» համալսարան) | **3** | | | | |
| Վարդենիսի մանկավարժական ինստիտուտ | **3** | | 1 | | **1** |
| Օտարերկրյա ՌՀ | **3** | | | | * |
| ԳՀՍ Ուրարտու համալսարան | **2** | | 1 | | **1** |
| ՄԽՀ (Երևանի Մովսես Խորենացու անվ. համալս.) | **2** | | | | |
| Երևանի մշակույթի համալսարան | **2** | | 1 | | **1** |
| Երևանի «ԱԶՊԱԹ-վետերան» ինստիտուտ | **2** | | | | |
| Երևանի «Գլաձոր» համալսարան | **2** | | 1 | | **1** |
| Երևանի «Գալիք» համալսարան | **2** | | 1 | | **1** |
| Ա. Մկրտչյանի անվ. տնտեսա-իրավագիտական համալսարան | **1** | | | | |
| ՀԳՊԱ (Դիլիջան) | **1** | | 1 | | **1** |
| Ավանդական բժշկության համալսարան | **1** | | | | |
| Երևանի «Անանիա Շիրակացի» համալսարան | **1** | | | | |
| Եվրոպական համալսարան (Գյումրի) | **1** | | | | |
| Եվրոպական համալսարան (Վանաձոր) | | 1 | | 1 | **1** |
| **Ընդամենը** | **13416** | **1093** | **9166** | **1035** | **10201** |

* Ռազմական բուհեր ընդունվածների թվի վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացված չէ ԳԹԿ-ի տվյալների էլեկտրոնային բազաներում, քանի որ ընդունելության մրցույթն անցկացնում են այդ բուհերը։

## 4.2 ՀԱՅՏԱԳՐՎԱԾ ԵՎ ԲՈՒՀ ԸՆԴՈՒՆՎԱԾ ԴԻՄՈՐԴՆԵՐԻ ԹՎԵՐԸ ԸՍՏ ՀՀ ՎԱՐՉԱՏԱՐԱԾՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ԵՎ ԱՅԼ ԵՐԿՐՆԵՐԻ

Աղյուսակ 10-ում ըստ ՀՀ վարչատարածքային միավորների և ՀՀ-ում ընդունելության քննություններին մասնակից դիմորդներ ունեցած երկրների ներկայացված են բուհ ընդունվածների տոկոսները: Հայտագրվածների թվերը չեն ներառում ռազմական բուհեր նշած դիմորդներին:

**Աղյուսակ 10. Բուհ ընդունվածների թվերը ըստ քաղաքացիության** (առանց ռազմական բուհերի)

| | | Հայաստանի Հանրապետություն (վարչատարածքային միավորները) | | | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | Երևան | Արագածոտն | Արարատ | Արմավիր | Գեղարքունիք | Լոռի | Կոտայք | Շիրակ | Սյունիք | Վայոց ձոր | Տավուշ | **Ընդամենը՝ ՀՀ-ից** | Արցախ | Վրաստան | Ռուսաստան | Այլ երկրներ | **Ընդամենը** | **Ընդամենը՝ բոլոր երկրներից** |
| Հայտա-գրվածներ | թիվը | 5873 | 490 | 728 | 771 | 665 | 894 | 922 | 990 | 607 | 207 | 571 | **12718** | 215 | 62 | 282 | 37 | **596** | 13314 |
| | տոկոսը հայտագրվածների ընդհանուր թվից | 44,1 | 3,7 | 5,5 | 5,8 | 5,0 | 6,7 | 6,9 | 7,4 | 4,6 | 1,6 | 4,3 | **95,5** | 1,6 | 0,5 | 2,1 | 0,3 | **4,5** | 100 |
| Ընդունվածներ | թիվը | 3560 | 405 | 682 | 729 | 608 | 795 | 921 | 912 | 518 | 167 | 481 | **9778** | 161 | 25 | 214 | 23 | **423** | 10201 |
| | տոկոսը ընդունվածների ընդհանուր թվից | 34,9 | 4,0 | 6,7 | 7,1 | 6,0 | 7,8 | 9,0 | 8,9 | 5,1 | 1,6 | 4,7 | **95,9** | 1,6 | 0,2 | 2,1 | 0,2 | **4,1** | 100 |
| | տոկոսը վարչատարածքային տվյալ միավորից (երկրից) հայտագրվածների թվից | 60,6 | 82,7 | 93,7 | 94,6 | 91,4 | 88,9 | 99,9 | 92,1 | 85,3 | 80,7 | 84,2 | **76,9** | 74,9 | 40,3 | 75,9 | 62,2 | **71,0** | 76,6 |

Աղյուսակում երևում է, որ բուհ և մասնագիտություն հայտագրած 13314 դիմորդներից 12718-ը և ընդունված 10201-ից 9778-ը եղել են ՀՀ-ից (95.5%): Բուհ ընդունված երևանաբնակ դիմորդները կազմել են բոլոր դիմորդների 34.9%-ը: ՀՀ մարզերից բուհ ընդունվածների ամենաբարձր տոկոսն արձանագրվել է Կոտայքում. բուհերում հայտագրված 13314 դիմորդների 6.9%-ը կազմած 922 դիմորդներից ընդունվել է 921-ը (բոլոր ընդունվածների 9%-ը): Վարչատարածքային տվյալ միավորներից բուհերում հայտագրվածներից ընդունվածների տոկոսով առաջատարը դարձյալ եղել է Կոտայքի մարզը (99.9%):

**Աղյուսակ 11. 2023 թ. բուհերի ընդունելության մրցույթի լրացուցիչ փուլով ընդունվածների թիվը**

| № | Բուհը | Ընդունվածների | | № | Բուհը | Ընդունվածների | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | թիվը | տոկոսը | | | թիվը | տոկոսը |
| 1 | ԵՊՀ | 208 | 20,1 | 17 | ԵՊՀ (Իջևան) | 7 | 0,7 |
| 2 | ՀԱՊՀ | 157 | 15,2 | 18 | ՀԳՊԱ | 4 | 0,4 |
| 3 | ԲՊՀ | 129 | 12,5 | 19 | ՀԱԱՀ | 4 | 0,4 |
| 4 | ՃՇՀԱՀ | 121 | 11,7 | 20 | ՀԱՊՀ (Վանաձոր) | 4 | 0,4 |
| 5 | ՀՌՀ (հայկական բաժանմունք) | 88 | 8,5 | 21 | ՀՊՏՀ (Գյումրի) | 3 | 0,3 |
| 6 | ՀՊՏՀ | 71 | 6,9 | 22 | ԳՊՀ (Գավառ) | 3 | 0,3 |
| 7 | ԵՊԲՀ | 53 | 5,1 | 23 | ԵԹԿՊԻ (Գյումրի) | 3 | 0,3 |
| 8 | ՀՊՄՀ | 35 | 3,4 | 24 | ՀԳՊԱ (Գյումրի) | 2 | 0,2 |
| 9 | Եվրոպական համալսարան | 29 | 2,8 | 25 | ԵԹԿՊԻ (Վանաձոր) | 2 | 0,2 |
| 10 | Հայկական բժշկական ինստիտուտ | 27 | 2,6 | 26 | ԵԹԿՊԻ | 1 | 0,1 |
| 11 | ԵՀՀ (Երևանի «Հայբուսակ» համալսարան) | 21 | 2,0 | 27 | ՀԱՊՀ (Գյումրի) | 1 | 0,1 |
| 12 | ՀՖԿՍՊԻ | 18 | 1,7 | 28 | Երևանի Գյուղատնտեսական համալսարան | 1 | 0,1 |
| 13 | ԵՊԿ | 13 | 1,3 | 29 | ԵՊԿ (Գյումրի) | 1 | 0,1 |
| 14 | Էրեբունի բժշկական ակադեմիա | 10 | 1,0 | 30 | Երևանի «Հյուսիսային» համալսարան | 1 | 0,1 |
| 15 | ՎՊՀ (Վանաձոր) | 9 | 0,9 | 31 | Եվրոպական համալսարան (Վանաձոր) | 1 | 0,1 |
| 16 | «Եվրասիա» միջազգային համալսարան | 8 | 0,8 | | **Ընդամենը** | **1035** | **100** |

Աղյուսակ 11-ից երևում է, որ 2023 թ. բուհերի ընդունելության մրցույթի լրացուցիչ փուլով ընդունված դիմորդների ամենաբարձր՝ 20,1%-ն ընդունվել է ԵՊՀ: Երկրորդ տեղում եղել է ՀԱՊՀ-ն (15,2%), երրորդ տեղում՝ ԲՊՀ-ն (12,5%): Նված երեք բուհեր ընդունվել է լրացուցիչ փուլով ընդունվածների 47,8%-ը:

Աղյուսակ 12-ում ներկայացված են ՀՀ բուհեր ընդունված դիմորդների տոկոսները ըստ ՀՀ վարչատարածքային միավորների և արտերկրի: Տվյալ վարչատարածքային միավորից կամ երկրից ըստ բուհերի ընդունվածների տոկոսները հաշվարկված են այդ վարչատարածքային միավորից կամ երկրից բուհ ընդունվածների ընդհանուր թվից: Աղյուսակում գունավորած է վարչատարածքային յուրաքանչյուր միավորի ամենաբարձր տոկոսի վանդակը:

**Աղյուսակ 12. 2023 թ. բուհ ընդունված դիմորդների բաշխումն ըստ ՀՀ վարչատարածքային միավորների և արտերկրի**

| | | Երևան | Արագածոտն | Արարատ | Արմավիր | Գեղարքունիք | Լոռի | Կոտայք | Շիրակ | Սյունիք | Վայոց ձոր | Տավուշ | Արցախ | Վրաստան | Ռուսաստան | Այլ երկրներ |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| ԵՊՀ | Ընդունվածների թիվը | 914 | 113 | 155 | 185 | 144 | 115 | 220 | 170 | 116 | 43 | 126 | 40 | 11 | 39 | 6 |
| | Տոկոսը | 25,7 | 27,9 | 22,7 | 25,4 | 23,7 | 14,5 | 23,9 | 18,6 | 22,4 | 25,7 | 26,2 | 24,9 | 44,0 | 18,2 | 26,1 |
| ՀԱՊՀ (Երևան) | Ընդունվածների թիվը | 457 | 51 | 87 | 86 | 59 | 51 | 92 | 32 | 49 | 11 | 26 | 10 | 2 | 41 | 3 |
| | Տոկոսը | 12,8 | 12,6 | 12,8 | 11,8 | 9,7 | 6,4 | 10,0 | 3,5 | 9,5 | 6,6 | 5,4 | 6,2 | 8,0 | 19,2 | 13,0 |
| ՃՇՀԱՀ | Ընդունվածների թիվը | 462 | 34 | 46 | 45 | 47 | 30 | 57 | 20 | 22 | 19 | 22 | 18 | 3 | 23 | 4 |
| | Տոկոսը | 13,0 | 8,4 | 6,7 | 6,2 | 7,7 | 3,8 | 6,2 | 2,2 | 4,2 | 11,4 | 4,6 | 11,2 | 12,0 | 10,75 | 17,4 |
| ՀՊՏՀ | Ընդունվածների թիվը | 409 | 56 | 75 | 111 | 81 | 50 | 162 | 52 | 84 | 26 | 32 | 23 | 3 | 23 | 1 |
| | Տոկոսը | 11,5 | 13,8 | 11,0 | 15,2 | 13,3 | 6,3 | 17,6 | 5,7 | 16,2 | 15,6 | 6,7 | 14,3 | 12,0 | 10,75 | 4,4 |
| ԲՊՀ | Ընդունվածների թիվը | 299 | 54 | 107 | 96 | 62 | 64 | 120 | 42 | 43 | 21 | 28 | 16 | 1 | | 1 |
| | Տոկոսը | 8,4 | 13,3 | 15,7 | 13,2 | 10,2 | 8,0 | 13,0 | 4,6 | 8,3 | 12,6 | 5,8 | 9,9 | 4,0 | | 4,4 |
| ԵՊԲՀ | Ընդունվածների թիվը | 293 | 21 | 34 | 48 | 49 | 50 | 53 | 63 | 41 | 12 | 20 | 11 | 2 | 22 | 3 |
| | Տոկոսը | 8,2 | 5,2 | 5,0 | 6,6 | 8,1 | 6,3 | 5,8 | 6,9 | 7,9 | 7,2 | 4,2 | 6,8 | 8,0 | 10,3 | 13,0 |
| ՀՊՄՀ | Ընդունվածների թիվը | 154 | 41 | 62 | 59 | 50 | 11 | 76 | 11 | 43 | 9 | 16 | 5 | 1 | 1 | 1 |
| | Տոկոսը | 4,3 | 10,1 | 9,1 | 8,1 | 8,2 | 1,4 | 8,2 | 1,2 | 8,3 | 5,4 | 3,3 | 3,1 | 4,0 | 0,5 | 4,3 |
| ՀՖԿՍՊԻ | Ընդունվածների թիվը | 118 | 13 | 30 | 32 | 9 | 11 | 37 | 11 | 11 | 10 | 24 | | | | |
| | Տոկոսը | 3,3 | 3,2 | 4,4 | 4,4 | 1,5 | 1,4 | 4,0 | 1,2 | 2,1 | 6,0 | 5,0 | | | | |
| ՀԱԱՀ | Ընդունվածների թիվը | 21 | 1 | 7 | 3 | 1 | 1 | 9 | | 2 | 5 | 3 | 1 | | 2 | |
| | Տոկոսը | 0,6 | 0,3 | 1,0 | 0,4 | 0,2 | 0,1 | 1,0 | | 0,4 | 3,0 | 0,6 | 0,6 | | 0,9 | |
| Այլ բուհեր | Ընդունվածների թիվը | 433 | 21 | 79 | 64 | 106 | 412 | 95 | 511 | 107 | 11 | 184 | 37 | 2 | 63 | 4 |
| | Տոկոսը | 12,2 | 5,2 | 11,6 | 8,8 | 17,4 | 51,8 | 10,3 | 56,1 | 20,7 | 6,6 | 38,2 | 23,0 | 8,0 | 29,4 | 17,4 |
| **Ընդամենը** | Ընդունվածների թիվը | **3560** | **405** | **682** | **729** | **608** | **795** | **921** | **912** | **518** | **167** | **481** | **161** | **25** | **214** | **23** |

Աղյուսակ 12-ից երևում է, որ ՀՀ մարզերից ընդունվածների թվով առաջատար բուհը եղել է ԵՊՀ-ն: Լոռու, Շիրակի և Տավուշի մարզերում գործող բուհերի և խոշոր բուհերի մասնաճյուղերի առկայությամբ պայմանավորված՝ նշված մարզերից այդ բուհեր դիմած և ընդունված դիմորդների տոկոսը եղել է բարձր: Դա առավել ցայտուն դրսևորվել է Շիրակի մարզում (56,1%): Վերը նշված մարզերից հայտագրվածների և ընդունվածների թվով ԵՊՀ-ն եղել է 2-րդ տեղում:

Այլ երկրների քաղաքացիներից այլ բուհեր ընդունվածների ամենաբարձր տոկոս է արձանագրվել միայն ՌԴ քաղաքացիների դեպքում, որովհետև այդ բուհեր ընդունված 63 դիմորդներից 29-ն ընդունվել են Հայ-Ռուսական համալսարան:

Գեղարքունիքի, Լոռու, Շիրակի, Սյունիքի և Տավուշի մարզերում գործող բուհերում ու խոշոր բուհերի մասնաճյուղերում հայտագրվածների և ընդունվածների վիճակագրական պատկերը ներկայացված է աղյուսակ 13-ում:

**Աղյուսակ 13. ՀՀ մարզերում գործող բուհերում 2023 թ. հայտագրված և ընդունված դիմորդների թվերը**

| Մարզը | Բուհը | Հայտագրվածներ | | | | | Ընդունվածներ | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | Տվյալ մարզից ՀՀ բուհեր ներկայացված հայտերի ընդհանուր թիվը | Ընդհանուր թիվը տվյալ բուհում | Թիվը տվյալ մարզից | Տոկոսը տվյալ բուհի հայտերի ընդհանուր թվից | Տոկոսը տվյալ մարզից ՀՀ բուհեր ներկայացված հայտերի թվից | Տվյալ մարզից ՀՀ բուհեր ընդունվածների ընդհանուր թիվը | Ընդհանուր թիվը տվյալ բուհում | Թիվը տվյալ մարզից | Տոկոսը տվյալ բուհ ընդունվածների թվից | Տոկոսը տվյալ մարզից ՀՀ բուհեր ընդունվածների ընդհանուր թվից |
| Շիրակ | Շիրակի պետական համալսարան | 1172 | 317 | 299 | 94,3 | 25,5 | 912 | 215 | 202 | 94,0 | 22,1 |
| | ՀՊՏՀ-ի Գյումրու մասնաճյուղ | | 156 | 151 | 96,8 | 12,9 | | 125 | 120 | 96,0 | 13,2 |
| | ՀԱՊՀ-ի Գյումրու մասնաճյուղ | | 97 | 89 | 91,8 | 7,6 | | 74 | 68 | 91,9 | 7,5 |
| | ՀԳՊԱ-ի Գյումրու մասնաճյուղ | | 46 | 45 | 97,8 | 3,8 | | 45 | 44 | 97,8 | 4,8 |
| | ԵԹԿՊԻ-ի Գյումրու մասնաճյուղ | | 30 | 28 | 93,3 | 2,4 | | 24 | 21 | 87,5 | 2,3 |
| | ԵՊԿ-ի Գյումրու մասնաճյուղ | | 23 | 18 | 78,3 | 1,5 | | 19 | 15 | 78,9 | 1,6 |
| | Գյումրու «Պրոգրես» համալսարան | | 3 | 3 | 100 | 0,3 | | | | | |
| | Եվրոպական համալս. Գյումրու մասն. | | 1 | 1 | 100 | 0,1 | | | | | |
| **Ընդամենը՝ Շիրակի մարզում** | | **1172** | **673** | **634** | **94,2** | **54,1** | **912** | **512** | **470** | **93,6** | **51,5** |

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Լոռի | Վանաձորի պետական համալսարան | 1035 | 401 | 392 | 97,8 | 37,9 | 795 | 294 | 287 | 97,6 | 36,1 |
| | ՀԱՊՀ-ի Վանաձորի մասնաճյուղ | | 86 | 84 | 97,7 | 8,1 | | 59 | 58 | 98,3 | 7,3 |
| | ԵԹԿՊԻ-ի Վանաձորի մասնաճյուղ | | 22 | 20 | 90,9 | 1,9 | | 15 | 14 | 93,3 | 1,8 |
| | Եվրոպական համալս. Վանաձորի մասն. | | | | | 0,1 | | 1 | 1 | 100 | 0,1 |
| **Ընդամենը՝ Լոռու մարզում** | | **1035** | **509** | **496** | **97,4** | **48,0** | **795** | **369** | **360** | **97,6** | **45,3** |
| Գեղարքունիք | Գավառի պետական համալսարան | 806 | 82 | 81 | 98,8 | 10,0 | 608 | 55 | 54 | 98,2 | 8,9 |
| | Վարդենիսի մանկավարժական ինստ. | | 3 | 3 | 100 | 0,4 | | 1 | 1 | 100 | 0,2 |
| **Ընդամենը՝ Գեղարքունիքի մարզում** | | **806** | **85** | **84** | **98,8** | **10,4** | **608** | **56** | **55** | **98,2** | |
| Սյունիք | Գորիսի պետական համալսարան | 640 | 77 | 68 | 88,3 | 10,6 | 518 | 45 | 41 | 91,1 | 7,9 |
| | ՀԱՊՀ-ի Կապանի մասնաճյուղ | | 69 | 69 | 100 | 10,8 | | 34 | 36 | 105,9 | 6,9 |
| **Ընդամենը՝ Սյունիքի մարզում** | | **640** | **146** | **137** | **93,8** | **21,4** | **518** | **79** | **77** | **97,5** | **14,9** |
| Տավուշ | ԵՊՀ-ի Իջևանի մասնաճյուղ | 667 | 216 | 209 | 96,8 | 31,3 | 481 | 161 | 158 | 98,1 | 32.8 |
| **Ընդամենը՝ Տավուշի մարզում** | | **667** | **216** | **209** | **96,8** | **31,3** | **481** | **161** | **158** | **98,1** | **32,8** |
| Ընդամենը՝ նշված հինգ մարզերում | | 4320 | 1629 | 1560 | 95.8 | 36.1 | 3314 | 1167 | 1120 | 96.0 | 33.8 |

Աղյուսակ 13-ում տեսնում ենք, որ 2023 թ. Շիրակի, Լոռու, Գեղարքունիքի, Սյունիքի և Տավուշի մարզերից ՀՀ բուհեր են հայտագրել 4320 դիմորդներ: Նշված մարզերում գործող բուհերում դիմում-հայտերի ընդհանուր քանակը կազմել է 1629, որից 1560-ը (95.8%) ներկայացրել են տեղացի դիմորդները: Մարզերում գործող բուհերի հայտերը կազմել են այդ մարզերից ՀՀ բուհեր ներկայացված հայտերի 36.1%-ը:

Շիրակի, Լոռու, Գեղարքունիքի, Սյունիքի և Տավուշի մարզերից 2023 թ. ՀՀ բուհեր է ընդունվել 3314 դիմորդ: Այդ մարզերում գործող բուհեր է ընդունվել 1167 դիմորդ, որոնցից 1120-ը (96%)՝ տեղացիներ: Վերոհիշյալ բուհեր ընդունվածները կազմել են այդ մարզերից ՀՀ բուհեր ընդունվածների 33.8%-ը:

Դիտարկված բուհերում հայտագրված տեղացի դիմորդների տոկոսը բարձր է եղել հատկապես Վանաձորի պետական համալսարանում, ԵՊՀ-ի Իջևանի մասնաճյուղում և Շիրակի պետական համալսարանում (համապատասխանաբար՝ 37.9%, 31.3%, 25.5%՝ հաշված տվյալ մարզից ՀՀ բուհերում հայտագրվածների ընդհանուր թվից): Այդ բուհեր ընդունվածների տոկոսները՝ հաշված տվյալ մարզից ՀՀ բուհեր ընդունվածների ընդհանուր թվից, եղել են, համապատասխանաբար, 36.1%, 32.8%, 22.1%:

Նշված բուհերում հայտագրված տեղացի դիմորդների ընդհանուր թիվը (1629) կազմել է 2023 թվականին ՀՀ բուհերում հայտագրվածների (13314) 16%-ը: Այդ բուհեր ընդունված 1120 տեղացիները կազմել են բոլոր՝ 10201 ընդունվածների 11%-ը:

## 4.3 2023 Թ. ՏԱՐԿԵՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ ՍԱՀՄԱՆԱԾ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2023 թ. բնագիտական, տեխնոլոգիական, ճարտարագիտական և մաթեմատիկական ուղղություններով պետության համար առաջնահերթ կարևորություն ունեցող մասնագիտություններով սովորելու նպատակով անվճար ուսուցման համակարգ ընդունված առաջին կուրսի ուսանողների համար ՀՀ Կառավարությունը սահմանել է պարտադիր զինվորական ծառայությունից տարկետման իրավունք (2023 թ. մարտի 23-ի N 383-Ն որոշում)։ Պետական բուհերի մասնագիտություններից այդ ցանկում ներառվել են Երևանի պետական համալսարանի «Ֆիզիկա», «Միջուկային ռեակտորների ֆիզիկա», «Նանոֆիզիկա և առաջատար տեխնոլոգիաներ», «Երկակի նշանակության տեխնոլոգիաների ֆիզիկա», «Ռադիոֆիզիկա», «Քիմիա» և Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանի «Ատոմային էներգետիկա», «Հեռահաղորդակցություն և ազդանշանների մշակում», «Մեքենաշինություն և նյութերի մշակում», «Թռչող ապարատների ավիացիոն սարքավորումներ» կրթական ծրագրերը։

Աղյուսակ 14-ում ներկայացված են 2023 թ. վերը նշված մասնագիտություններ հայտագրած և ընդունված դիմորդների թվերը։ Համեմատության նպատակով ներկայացվել են նաև 2022 թ. տվյալները։

Աղյուսակի՝ ընդունվածների թվերը ներկայացնող դաշտերում «Տոկոսը տեղերի թվից» սյունակների ցուցանիշները յուրաքանչյուր մասնագիտության համար հաշվարկվել են, անվճար ընդունվածների դեպքում՝ անվճար տեղերի թվից, վճարովիի դեպքում՝ վճարովի տեղերի թվից։

## Աղյուսակ 14. Դիմորդների թիվը 2022 և 2023 թթ. ըստ տարկետման արտոնություն սահմանած մասնագիտությունների

| Բուհը | Մասնագիտությունը | 2023 թ. Անվճար տեղեր | 2023 թ. Վճարովի տեղեր | 2023 թ. Հայտագրվածների թիվը 1-ին տողով: Հիմնական փուլ | 2023 թ. Հայտագրվածների թիվը 1-ին տողով: Լրացուցիչ փուլ | 2023 թ. Ընդունվածների թիվը: Անվճար | 2023 թ. Ընդունվածների թիվը: Տոկոսը տեղերի թվից | 2023 թ. Ընդունվածների թիվը: Վճարովի | 2023 թ. Ընդունվածների թիվը: Տոկոսը տեղերի թվից | 2023 թ. Ընդունվածների թիվը: Ընդամենը | 2022 թ. Անվճար տեղեր | 2022 թ. Վճարովի տեղեր | 2022 թ. Հայտագրվածների թիվը 1-ին տողով: Հիմնական փուլ | 2022 թ. Հայտագրվածների թիվը 1-ին տողով: Լրացուցիչ փուլ | 2022 թ. Ընդունվածների թիվը: Անվճար | 2022 թ. Ընդունվածների թիվը: Տոկոսը տեղերի թվից | 2022 թ. Ընդունվածների թիվը: Վճարովի | 2022 թ. Ընդունվածների թիվը: Տոկոսը տեղերի թվից | 2022 թ. Ընդունվածների թիվը: Ընդամենը |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| ԵՊՀ | Ֆիզիկա | 23 | 20 | 58 | | 23 | 100 | 21 | 105 | **44** | 20 | 21 | 24 | 2 | 20 | 100 | 4 | 19,0 | **24** |
| | Միջուկային ռեակտորների ֆիզիկա | 6 | 10 | 15 | 5 | 6 | 100 | 10 | 100 | **16** | 5 | 15 | 5 | | 5 | 100 | | | **5** |
| | Նանոֆիզիկա և առաջատար տեխնոլոգիաներ | 10 | 7 | 25 | | 10 | 100 | 7 | 100 | **17** | 8 | 14 | 17 | | 9 | 112,5 | 6 | 42,9 | **15** |
| | Երկակի նշանակության տեխնոլոգիաների ֆիզիկա | 9 | 7 | 21 | | 9 | 100 | 7 | 100 | **16** | 8 | 12 | 10 | 1 | 8 | 100 | 1 | 8,3 | **9** |
| | Ռադիոֆիզիկա | 26 | 38 | 68 | | 26 | 100 | 38 | 100 | **64** | 22 | 40 | 56 | 4 | 22 | 100 | 30 | 75,0 | **52** |
| | Քիմիա* | 12 | 9 | 17 | | 13 | 100** | | | **13** | 11 | 17 | 8 | 1 | 9 | 81,8 | | | **9** |
| | **Ընդամենը ԵՊՀ-ում** | **86** | **91** | **204** | **5** | **87** | **100** | **83** | **91,2** | **170** | **74** | **119** | **120** | **8** | **73** | **98,6** | **41** | **34,5** | **114** |
| ՀԱՊՀ | Ատոմային էներգետիկա | 8 | 8 | 16 | | 8 | 100 | 4 | 50 | **12** | 8 | 12 | 10 | 1 | 6 | 75 | | | **6** |
| | Հեռահաղորդակցություն և ազդանշանների մշակում | 22 | 18 | 47 | | 22 | 100 | 19 | 105,6 | **41** | 20 | 18 | 21 | 17 | 20 | 100 | 9 | 50,0 | **29** |
| | Մեքենաշինություն և նյութերի մշակում | 5 | 10 | 11 | | 5 | 100 | 3 | 30 | **8** | 5 | 15 | 8 | | 5 | 100 | | | **5** |
| | Թռչող ապարատների ավիացիոն սարքավորումներ | 14 | 26 | 30 | 3 | 14 | 100 | 17 | 65,4 | **31** | 12 | 31 | 24 | 3 | 13 | 108,3 | 8 | 25,8 | **21** |
| | **Ընդամենը ՀԱՊՀ-ում** | **49** | **62** | **104** | **3** | **49** | **100** | **43** | **69,4** | **92** | **45** | **76** | **63** | **21** | **44** | **97,8** | **17** | **22,4** | **61** |
| Ընդամենը | | 135 | 153 | 308 | 8 | 136 | 100,7 | 126 | 82,4 | 262 | 119 | 195 | 183 | 29 | 117 | 98,3 | 58 | 29,7 | 175 |

* Անվճար ընդունվածների թվում ներառված է պահուստային տեղերի հաշվին արտոնությամբ ընդունված մեկ դիմորդ։

** Տոկոսի հաշվարկը կատարվել է՝ հաշվի չառնելով պահուստային տեղերի հաշվին ընդունված մեկ դիմորդին։

Աղյուսակ 14-ի տվյալներից հետևում է, որ 2023 թ. ամբողջությամբ լրացել են նշված բոլոր մասնագիտությունների անվճար տեղերը: ԵՊՀ-ի վեց մասնագիտություններից հինգի վճարովի տեղերը նույնպես լրացել են ամբողջությամբ: Թափուր են մնացել միայն «Քիմիա» մասնագիտության վճարովի տեղերը: ՀԱՊՀ-ում մասամբ լրացել են «Ատոմային էներգետիկա» (50%-ով), «Մեքենաշինություն և նյութերի մշակում» (30%-ով) և «Թռչող ապարատների ավիացիոն սարքավորումներ» (65.4%-ով) մասնագիտությունների վճարովի տեղերը:

«Հեռահաղորդակցություն և ազդանշանների մշակում» մասնագիտության վճարովի տեղերը լրացել են ամբողջությամբ: Վերջինիս և ԵՊՀ-ի «Ֆիզիկա» մասնագիտության վճարովի տեղերով ընդունվել է մեկական դիմորդ ավելի, որոնք ունեցել են այդ տեղերի անցողիկ միավորին հավասար միավոր, և ԿԳՄՍՆ-ն վճարովի համակարգին լրացուցիչ տեղեր է հատկացրել: Այդ իսկ պատճառով դրանց համապատասխան տոկոսային ցուցանիշները ստացվել են 100%-ից բարձր:

Այսպիսով, 2023 թ. տարկետում սահմանած մասնագիտությունների անվճար տեղերը լրացել են ամբողջությամբ, իսկ վճարովի տեղերը՝ 82,4 տոկոսով (անցողիկ միավորին հավասար միավորների առկայության դեպքում ավելացրած տեղերը ներառյալ):

2022 թվականին, երբ դիտարկված մասնագիտությունների ընդունելության համար տարկետում սահմանված չէր, անվճար տեղերն ամբողջությամբ լրացված են եղել, բացի ԵՊՀ-ի «Քիմիա» և ՀԱՊՀ-ի «Ատոմային էներգետիկա» մասնագիտություններից (համապատասխանաբար՝ 81,8 և 75 տոկոսով): ԵՊՀ-ի «Միջուկային ռեակտորների ֆիզիկա», «Քիմիա», ՀԱՊՀ-ի «Ատոմային էներգետիկա», «Մեքենաշինություն և նյութերի մշակում» մասնագիտությունների վճարովի տեղերն ամբողջությամբ մնացել են թափուր: Վճարովի ուսուցման համակարգ ընդունվածների ամենաբարձր տոկոսն արձանագրվել է ԵՊՀ-ի «Ռադիոֆիզիկա» (75%) և ՀԱՊՀ-ի «Հեռահաղորդակցություն և ազդանշանների մշակում» (50%) մասնագիտությունների դեպքում: Ընդհանուր հաշվով, 2022 թ. անվճար տեղերը լրացել են 98,3%-ով, վճարովի տեղերը՝ 29,7%-ով:

Աղյուսակի տվյալներից կարելի է եզրակացնել, որ կարելի է մեծացնել տարկետում սահմանած մասնագիտությունների ցանկը՝ նպաստելով ՀՀ համար առաջնահերթ կարևորություն ունեցող մասնագետների պատրաստման գործընթացին:

## 4.4 ԲՈՒՀ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՇՐՋԱՆԱՎԱՐՏՆԵՐԻ ԲԱՐՁՐ ՏՈԿՈՍՈՎ ԱՌԱՆՁՆԱՑԱԾ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԸՍՏ ՀՀ ՎԱՐՉԱՏԱՐԱԾՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ

Աղյուսակ 15-ում ներկայացված է 2022-2023 ուսումնական տարում տասը և ավելի շրջանավարտ ունեցած հաստատություններից բուհ ընդունվածների ամենաբարձր տոկոսն ունեցած հանրակրթական ուսումնական հաստատությունների տասնյակը, որտեղ դպրոցները դասավորված են տոկոսների նվազման կարգով:

**Աղյուսակ 15. Բուհ ընդունված շրջանավարտների ամենաբարձր տոկոսով առանձնացած հանրակրթական ուսումնական հաստատությունների տասնյակը**

| Հանրակրթական ուսումնական հաստատությունը | Վարչա-տարածքային միավորը | Շրջանա-վարտների թիվը | Բուհ ընդունվածների | |
|---|---|---|---|---|
| | | | թիվը | տոկոսը |
| ՀԱՊՀ Երևանի ավագ դպրոց | Երևան | 299 | 241 | 80,6 |
| Վանաձորի մաթեմատիկական և բնագիտական առարկաների խորացված ուսուցմամբ հատուկ դպրոց | Լոռի | 25 | 19 | 76,0 |
| «Ֆոտոն» վարժարան | Շիրակ | 152 | 114 | 75,0 |
| Գյումրու «Ակադեմիական» վարժարան | Շիրակ | 130 | 96 | 73,8 |
| Գյումրու թիվ 8 միջնակարգ դպրոց | Շիրակ | 15 | 11 | 73,3 |
| Հրազդանի թիվ 13 ավագ դպրոց | Կոտայք | 100 | 73 | 73,0 |
| Արթիկի թիվ 3 ավագ դպրոց | Շիրակ | 67 | 48 | 71,6 |
| ԵՊԲՀ-ի «Հերացի» ավագ դպրոց | Երևան | 183 | 131 | 71,6 |
| Վանաձորի թիվ 11 ավագ դպրոց | Լոռի | 133 | 95 | 71,4 |
| Կապանի թիվ 9 ավագ դպրոց | Սյունիք | 90 | 64 | 71,1 |
| **Ընդամենը** | | **1194** | **892** | **74,7** |

Աղյուսակում երևում է, որ բուհ ընդունված շրջանավարտների թվով և տոկոսով առաջատար հանրակրթական ուսումնական հաստատությունը եղել է ՀԱՊՀ Երևանի ավագ դպրոցը, որի 299 շրջանավարտներից 241-ն (80,6%) ընդունվել են ՀՀ բուհեր: Նշված տասը դպրոցներից բուհեր ընդունված ամենամեծ թվով շրջանավարտներն ունեցել է վերոհիշյալ դպրոցը (ընդունվածների թիվը՝ 241 (80,6%)): Այս տասնյակի բուհ ընդունվածները կազմել են շրջանավարտների 74.7%-ը:

Աղյուսակ 16-ում ներկայացված է նույն ուսումնական տարում տասը և ավելի շրջանավարտ ունեցած հաստատություններից բուհ ընդունվածների ամենամեծ թիվ արձանագրած հանրակրթական ուսումնական հաստատությունների տասնյակը: Դպրոցները դասավորված են ընդունվածների թվի նվազման կարգով:

**Աղյուսակ 16. Բուհ ընդունված շրջանավարտների ամենմեծ թվով առանձնացած հանրակրթական ուսումնական հաստատությունների տասնյակը**

| Հանրակրթական ուսումնական հաստատությունը | Վարչա-տարածքային միավորը | Շրջանա-վարտների թիվը | Բուհ ընդունվածների | |
|---|---|---|---|---|
| | | | թիվը | տոկոսը |
| ՀԱՊՀ Երևանի ավագ դպրոց | Երևան | 299 | 241 | 80,6 |
| ՃՇՀԱՀ հիմնադրամի Մ. Աբեղյանի անվան ավագ դպրոց | Երևան | 303 | 209 | 69,0 |
| ԵՊԲՀ-ի «Հերացի» ավագ դպրոց | Երևան | 183 | 131 | 71,6 |
| Թիվ 190 ավագ դպրոց | Երևան | 249 | 130 | 52,2 |
| «Ֆոտոն» վարժարան | Շիրակ | 152 | 114 | 75,0 |
| ՀՊՄՀ-ի Երևանի հենակետային վարժարան | Երևան | 142 | 97 | 68,3 |
| Գյումրու տնտեսագիտական վարժարան | Շիրակ | 183 | 97 | 53,0 |
| Գյումրու «Ակադեմիական» վարժարան | Շիրակ | 130 | 96 | 73,8 |
| Վանաձորի թիվ 11 ավագ դպրոց | Լոռի | 133 | 95 | 71,4 |
| Աբովյանի թիվ 4 ավագ դպրոց | Կոտայք | 158 | 95 | 60,1 |
| **Ընդամենը** | | **1932** | **1305** | **67,5** |

Աղյուսակ 16-ից երևում է, որ ընդունվածների ամենամեծ թվով առաջատարը դարձյալ եղել է ՀԱՊՀ Երևանի ավագ դպրոցը (241 ընդունված)։ Բուհ ընդունվածների ամենամեծ թվով հանրակրթական ուսումնական հաստատությունների տասնյակում ընդունվածները կազմել են շրջանավարտների 67.5%-ը։

Աղյուսակ 17-ում ներկայացված են ըստ ՀՀ վարչատարածքային միավորներից բուհ ընդունված շրջանավարտների ամենաբարձր տոկոսով առանձնացած հանրակրթական ուսումնական հաստատությունների հնգյակները, որոնք դասավորված են ընդունվածների տոկոսի նվազման կարգով: Այստեղ ևս դիտարկվել են 2023 թվականին տասը և ավելի շրջանավարտ ունեցած հաստատությունները:

**Աղյուսակ 17. Բուհ ընդունված շրջանավարտների բարձր տոկոսով առանձնացած հանրակրթական ուսումնական հաստատությունների հնգյակները ըստ ՀՀ վարչատարածքային միավորների**

| Վարչատարած-քային միավորը | Հանրակրթական ուսումնական հաստատությունը | Շրջանավարտ-ների թիվը | Բուհ ընդուն-վածների թիվը | Բուհ ընդունված-ների տոկոսը | Վարչատարած-քային միավորը | Հանրակրթական ուսումնական հաստատությունը | Շրջանավարտ-ների թիվը | Բուհ ընդուն-վածների թիվը | Բուհ ընդունված-ների տոկոսը |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Երևան | ՀԱՊՀ Երևանի ավագ դպրոց | 299 | 241 | 80,6 | Լոռի | Վանաձորի մաթեմատիկայի և բնագիտական առարկաների խորացված ուսուցմամբ հատուկ դպրոց | 25 | 19 | 76,0 |
| | ԵՊԲՀ-ի «Հերացի» ավագ դպրոց | 183 | 131 | 71,6 | | Վանաձորի թիվ 11 ավագ դպրոց | 133 | 95 | 71,4 |
| | ՃՇՀԱՀ հիմնադրամի Մ. Աբեղյանի անվան ավագ դպրոց | 303 | 209 | 69,0 | | ՎՊՀ-ի հենակետային վարժարան | 135 | 88 | 65,2 |
| | ՀՊՄՀ-ի Երևանի հենակետային վարժարան | 142 | 97 | 68,3 | | Վանաձորի ՀԱՊՀ-ի մասնաճյուղի ավագ դպրոց | 56 | 35 | 62,5 |
| | Երևանի Ա. Շահինյանի անվան ֆիզմաթ հատուկ դպրոց | 137 | 93 | 67,9 | | Սպիտակի ավագ դպրոց | 65 | 40 | 61,5 |
| Արագածոտն | Բյուրականի միջնակարգ դպրոց | 22 | 13 | 59,1 | Կոտայք | Հրազդանի թիվ 13 ավագ դպրոց | 100 | 73 | 73,0 |
| | Աշտարակի ավագ դպրոց | 133 | 72 | 54,1 | | Հրազդանի թիվ 1 ավագ դպրոց | 41 | 29 | 70,7 |
| | Ապարանի ավագ դպրոց | 61 | 33 | 54,1 | | Աբովյանի թիվ 4 ավագ դպրոց | 158 | 95 | 60,1 |
| | Թալինի ավագ դպրոց | 52 | 22 | 42,3 | | Հրազդանի թիվ 10 ավագ դպրոց | 96 | 56 | 58,3 |
| | Ուջանի միջնակարգ դպրոց | 40 | 15 | 37,5 | | Աբովյանի թիվ 6 ավագ դպրոց | 41 | 22 | 53,7 |
| Արարատ | Այգեստանի միջնակարգ դպրոց | 22 | 14 | 63,6 | Շիրակ | «Ֆոտոն» վարժարան | 152 | 114 | 75,0 |
| | Մասիսի թիվ 5 ավագ դպրոց | 77 | 45 | 58,4 | | Գյումրու «Ակադեմիական» վարժարան | 130 | 96 | 73,8 |
| | Տափերականի միջնակարգ դպրոց | 25 | 13 | 52,0 | | Գյումրու թիվ 8 միջնակարգ դպրոց | 15 | 11 | 73,3 |
| | Մխչյանի միջնակարգ դպրոց | 35 | 18 | 51,4 | | Արթիկի թիվ 3 ավագ դպրոց | 67 | 48 | 71,6 |

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | Արարատի ավագ դպրոց | 79 | 38 | 48,1 | | Մարալիկի թիվ 1 միջնակարգ դպրոց | 23 | 15 | 65,2 |
| Արմավիր | Արմավիրի թիվ 1 ավագ դպրոց | 72 | 48 | 66,7 | Սյունիք | Կապանի թիվ 9 ավագ դպրոց | 90 | 64 | 71,1 |
| | «Էօրնեկեան» միջնակարգ դպրոց | 34 | 21 | 61,8 | | Կապանի թիվ 2 ավագ դպրոց | 93 | 64 | 68,8 |
| | Արմավիրի թիվ 4 ավագ դպրոց | 87 | 53 | 60,9 | | Սիսիանի ավագ դպրոց | 114 | 74 | 64,9 |
| | Քարակերտի թիվ 2 միջնակարգ դպրոց | 20 | 11 | 55,0 | | Գորիսի թիվ 4 ավագ դպրոց | 98 | 61 | 62,2 |
| | Մրգաշատի թիվ 2 միջնակարգ դպրոց | 28 | 13 | 46,4 | | Քաջարանի թիվ 2 միջնակարգ դպրոց | 43 | 26 | 60,5 |
| Գեղարքունիք | Գեղհովիտի թիվ 1 միջնակարգ դպրոց | 29 | 19 | 65,5 | Տավուշ | Ազատամուտի միջնակարգ դպրոց | 26 | 17 | 65,4 |
| | Լճաշենի միջնակարգ դպրոց | 16 | 10 | 62,5 | | Բերդի ավագ դպրոց | 49 | 28 | 57,1 |
| | Նորատուսի թիվ 2 միջնակարգ դպրոց | 18 | 11 | 61,1 | | Իջևանի ավագ դպրոց | 138 | 78 | 56,5 |
| | Գավառի թիվ 2 միջնակարգ դպրոց | 18 | 11 | 61,1 | | Դիլիջանի ավագ դպրոց | 90 | 50 | 55,6 |
| | Կարմիրգյուղի թիվ 2 միջնակարգ դպրոց | 31 | 18 | 58,1 | | Նոյեմբերյանի ավագ դպրոց | 39 | 21 | 53,8 |
| *Բարձր պատրաստվածություն ունեցած շրջանավարտների մի մասը, որոնք բուհերի ընդունելության մրցույթի ցանկում ընդգրկված որևէ բուհ չեն ընդունվել, հնարավոր է, որ ընդունվել են այդ ցանկում չընդգրկված այլ բուհեր:* | | | | | Վայոց ձոր | Վայքի ավագ դպրոց | 46 | 29 | 63,0 |
| | | | | | | Եղեգնաձորի ավագ դպրոց | 74 | 41 | 55,4 |

**Աղյուսակ 18.** **Բուհ ընդունված շրջանավարտների մեծ թվով առանձնացած հանրակրթական ուսումնական հաստատությունների հնգյակները ըստ ՀՀ վարչատարածքային միավորների**

| Վարչատարած-քային միավորը | Հանրակրթական ուսումնական հաստատությունը | Շրջանավարտ-ների թիվը | Բուհ ընդուն-վածների թիվը | Բուհ ընդունված-ների տոկոսը | Վարչատարած-քային միավորը | Հանրակրթական ուսումնական հաստատությունը | Շրջանավարտ-ների թիվը | Բուհ ընդուն-վածների թիվը | Բուհ ընդունված-ների տոկոսը |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Երևան | ՀԱՊՀ Երևանի ավագ դպրոց | 299 | 241 | 80,6 | Լոռի | Վանաձորի թիվ 11 ավագ դպրոց | 133 | 95 | 71,4 |
| | ՃՇՀԱՀ հիմնադրամի Մ. Աբեղյանի անվան ավագ դպրոց | 303 | 209 | 69,0 | | ՎՊՀ-ի հենակետային վարժարան | 135 | 88 | 65,2 |
| | ԵՊԲՀ-ի «Հերացի» ավագ դպրոց | 183 | 131 | 71,6 | | Վանաձորի թիվ 5 ավագ դպրոց | 94 | 48 | 51,1 |
| | Թիվ 190 ավագ դպրոց | 249 | 130 | 52,2 | | Սպիտակի ավագ դպրոց | 65 | 40 | 61,5 |
| | ՀՊՄՀ-ի Երևանի հենակետային վարժարան | 142 | 97 | 68,3 | | Վանաձորի ՀԱՊՀ-ի մասնաճյուղի ավագ դպրոց | 56 | 35 | 62,5 |
| Արագածոտն | Աշտարակի ավագ դպրոց | 133 | 72 | 54,1 | Կոտայք | Աբովյանի թիվ 4 ավագ դպրոց | 158 | 95 | 60,1 |
| | Ապարանի ավագ դպրոց | 61 | 33 | 54,1 | | Հրազդանի թիվ 13 ավագ դպրոց | 100 | 73 | 73,0 |
| | Թալինի ավագ դպրոց | 52 | 22 | 42,3 | | Չարենցավանի ավագ դպրոց | 130 | 68 | 52,3 |
| | Ուջանի միջնակարգ դպրոց | 40 | 15 | 37,5 | | Հրազդանի թիվ 10 ավագ դպրոց | 96 | 56 | 58,3 |
| | Բյուրականի միջնակարգ դպրոց | 22 | 13 | 59,1 | | Եղվարդի թիվ 1 ավագ դպրոց | 103 | 54 | 52,4 |
| Արարատ | Մասիսի թիվ 5 ավագ դպրոց | 77 | 45 | 58,4 | Շիրակ | «Ֆոտոն» վարժարան | 152 | 114 | 75,0 |
| | Արարատի ավագ դպրոց | 79 | 38 | 48,1 | | Գյումրու տնտեսագիտական վարժարան | 183 | 97 | 53,0 |
| | Վեդու թիվ 3 ավագ դպրոց | 86 | 26 | 30,2 | | Գյումրու«Ակադեմիական» վարժարան | 130 | 96 | 73,8 |
| | Արտաշատի ավագ դպրոց | 56 | 21 | 37,5 | | Արթիկի թիվ 3 ավագ դպրոց | 67 | 48 | 71,6 |
| | Մխչյանի միջնակարգ դպրոց | 35 | 18 | 51,4 | | «ՇՊՀ» հիմնադրամի ավագ դպրոց | 226 | 40 | 17,7 |
| Արմավիր | Արմավիրի թիվ 4 ավագ դպրոց | 87 | 53 | 60,9 | Սյունիք | Սիսիանի ավագ դպրոց | 114 | 74 | 64,9 |
| | Արմավիրի թիվ 1 ավագ դպրոց | 72 | 48 | 66,7 | | Կապանի թիվ 9 ավագ դպրոց | 90 | 64 | 71,1 |
| | Վաղարշապատի թիվ 2 ավագ դպրոց | 101 | 29 | 28,7 | | Կապանի թիվ 2 ավագ դպրոց | 93 | 64 | 68,8 |
| | Վաղարշապատի թիվ 10 ավագ դպրոց | 70 | 28 | 40,0 | | Գորիսի թիվ 4 ավագ դպրոց | 98 | 61 | 62,2 |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | Վաղարշապատի թիվ 5 ավագ դպրոց | 97 | 28 | 28,9 |
| Գեղարքունիք | Մարտունու ավագ դպրոց | 77 | 42 | 54,5 |
| | Գավառի ավագ դպրոց | 54 | 30 | 55,6 |
| | Սևանի Խ. Աբովյանի անվան ավագ դպրոց | 65 | 30 | 46,2 |
| | Լիճքի միջնակարգ դպրոց | 63 | 22 | 34,9 |
| | Գեղհովիտի թիվ 1 միջնակարգ դպրոց | 29 | 19 | 65,5 |

*Բարձր պատրաստվածություն ունեցած շրջանավարտների մի մասը, որոնք բուհերի ընդունելության մրցույթի ցանկում ընդգրկված որևէ բուհ չեն ընդունվել, հնարավոր է, որ ընդունվել են այդ ցանկում չընդգրկված այլ բուհեր:*

| | | | | |
|---|---|---|---|---|
| | Գորիսի թիվ 1 ավագ դպրոց | 77 | 32 | 41,6 |
| Վայոց ձոր | Եղեգնաձորի ավագ դպրոց | 74 | 41 | 55,4 |
| | Վայքի ավագ դպրոց | 46 | 29 | 63,0 |
| | Զառիթափի միջնակարգ դպրոց | 13 | 9 | 69,2 |
| | Արենիի միջնակարգ դպրոց | 20 | 8 | 40,0 |
| | Ջերմուկի կրթահամալիր | 33 | 8 | 24,2 |
| Տավուշ | Իջևանի ավագ դպրոց | 138 | 78 | 56,5 |
| | Դիլիջանի ավագ դպրոց | 90 | 50 | 55,6 |
| | Բերդի ավագ դպրոց | 49 | 28 | 57,1 |
| | Իջևանի վարժարան | 47 | 23 | 48,9 |
| | Նոյեմբերյանի ավագ դպրոց | 39 | 21 | 53,8 |

## 4.5 ՍԱՀՄԱՆԱՄԵՐՁ ԵՎ ԲԱՐՁՐԼԵՌՆԱՅԻՆ ԳՅՈՒՂԵՐԻՑ ԲՈՒՀ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՇՐՋԱՆԱՎԱՐՏՆԵՐԻ ԲԱՐՁՐ ՏՈԿՈՍՆԵՐՈՎ ԱՌԱՆՁՆԱՑԱԾ ԴՊՐՈՑՆԵՐԸ

2023 թ. ՀՀ սահմանամերձ և բարձրլեռնային գյուղերից բուհերում հայտագրվել է 783 դիմորդ, որոնցից ընդունվել է 597-ը (76,2%) (աղյուսակ 19):

Աղյուսակներ 20-ում և 21-ում ըստ ՀՀ վարչատարածքային միավորների ներկայացված են սահմանամերձ և բարձրլեռնային գյուղերի՝ 2023 թ. բուհ ընդունված շրջանավարտների 50 և ավելի տոկոսով առանձնացած դպրոցները:

**Աղյուսակ 19. 2023 թ. դիմորդների թվերը սահմանամերձ և բարձրլեռնային գյուղերում**

| Գյուղական բնակավայրի տիպը | Հայտագրվածների թիվը | Ընդունվածների | |
|---|---|---|---|
| | | թիվը | տոկոսը |
| Սահմանամերձ | 443 | 343 | 43,8 |
| Բարձրլեռնային | 334 | 253 | 32,3 |
| Բարձրլեռնային սահմանամերձ | 6 | 1 | 0,1 |
| **Ընդամենը** | **783** | **597** | **76,2** |

**Աղյուսակ 20. 2023 թ. բուհ ընդունված շրջանավարտների՝ 50 և ավելի տոկոսով առանձնացած սահմանամերձ գյուղերի դպրոցները**

| Մարզը | Հանրակրթական ուսումնական հաստատությունը | Շրջանավարտների թիվը | Բուհ ընդունվածների | | այդ թվում՝ 1-ին հայտով անվճար ընդունվածների | |
|---|---|---|---|---|---|---|
| | | | թիվը | տոկոսը | թիվը | տոկոսը՝ ընդունվածների թվից |
| **10 և ավելի շրջանավարտ ունեցած դպրոցներ** | | | | | | |
| Տավուշ | Կողբի թիվ 2 միջնակարգ դպրոց | 12 | 9 | 75,0 | | |
| Տավուշ | Ազատամուտի միջնակարգ դպրոց | 26 | 17 | 65,4 | 3 | 11,5 |
| Տավուշ | Ոսկևանի միջնակարգ դպրոց | 10 | 6 | 60,0 | 1 | 10,0 |
| Տավուշ | Վերին Կարմիրաղբյուրի միջնակարգ դպրոց | 12 | 7 | 58,3 | | |
| Սյունիք | Ագարակի միջնակարգ դպրոց | 47 | 26 | 55,3 | 3 | 6,4 |
| Տավուշ | Կայանավանի միջնակարգ դպրոց | 11 | 6 | 54,5 | 3 | 27,3 |
| Տավուշ | Կողբի թիվ 1 միջնակարգ դպրոց | 16 | 8 | 50,0 | 2 | 12,5 |
| **5-10 շրջանավարտ ունեցած դպրոցներ** | | | | | | |
| Տավուշ | Բաղանիսի միջնակարգ դպրոց | 7 | 7 | 100 | | |
| Շիրակ | Շիրակավանի միջնակարգ դպրոց | 5 | 4 | 80,0 | 1 | 20,0 |
| Արարատ | Պ. Սևակ գյուղի միջնակարգ դպրոց | 8 | 6 | 75,0 | 1 | 12,5 |
| Շիրակ | Բայանդուրի միջնակարգ դպրոց | 8 | 5 | 62,5 | | |
| Շիրակ | Իսահակյանի միջնակարգ դպրոց | 5 | 3 | 60,0 | | |
| Տավուշ | Ներքին Կարմիրաղբյուրի միջնակարգ դպրոց | 7 | 4 | 57,1 | 1 | 14,3 |
| Վայոց ձոր | Խաչիկի միջնակարգ դպրոց | 7 | 4 | 57,1 | 2 | 28,6 |
| Տավուշ | Ջուջևանի միջնակարգ դպրոց | 6 | 3 | 50,0 | | |
| Գեղարքունիք | Վահանի միջնակարգ դպրոց | 6 | 3 | 50,0 | | |
| Վայոց ձոր | Մարտիրոսի միջնակարգ դպրոց | 6 | 3 | 50,0 | 1 | 16,7 |

Աղյուսակ 20-ում տեսնում ենք, որ 10 և ավելի շրջանավարտ ունեցած դպրոցներից բուհ ընդունվածների ամենաբարձր տոկոսն արձանագրվել է Տավուշի մարզի Կողբ գյուղի թիվ 2 միջնակարգ դպրոցում (75%՝ 12 շրջանավարտներից ընդունվել են 9-ը): Բուհ ընդունվածների ամենամեծ թիվն արձանագրվել է Սյունիքի մարզի Ագարակի միջնակարգ դպրոցում (47 շրջանավարտից՝ 26-ը):

5-10 շրջանավարտ ունեցած դպրոցներից առաջատարը եղել է Տավուշի մարզի Բաղանիսի միջնակարգ դպրոցը, որի բոլոր՝ յոթ շրջանավարտները բուհ են ընդունվել:

Աղյուսակ 21-ում ներկայացված 10 և ավելի շրջանավարտ ունեցած դպրոցներից բուհ ընդունված շրջանավարտների ամենաբարձր տոկոսն արձանագրվել է Գեղարքունիքի մարզի Սարուխանի թիվ 1 միջնակարգ դպրոցում (81,8%՝ 11 շրջանավարտներից ընդունվել է 9-ը):

**Աղյուսակ 21. 2023 թ. բուհ ընդունված շրջանավարտների՝ 50 և ավելի տոկոսով առանձնացած բարձրլեռնային գյուղերի դպրոցները**

| Մարզը | Հանրակրթական ուսումնական հաստատությունը | Շրջանավարտ-ների թիվը | Բուհ ընդունվածների | | այդ թվում՝ 1-ին հայտով անվճար ընդունվածների | |
|---|---|---|---|---|---|---|
| | | | թիվը | տոկոսը | թիվը | տոկոսը՝ ընդունված-ների թվից |
| **10 և ավելի շրջանավարտ ունեցած դպրոցներ** | | | | | | |
| Գեղարքունիք | Սարուխանի թիվ 1 միջնակարգ դպրոց | 11 | 9 | 81,8 | 4 | 36,4 |
| Գեղարքունիք | Գեղհովիտի թիվ 1 միջնակարգ դպրոց | 29 | 19 | 65,5 | 4 | 13,8 |
| Գեղարքունիք | Վարդենիկի կրթահամալիր | 16 | 9 | 56,3 | | |
| Գեղարքունիք | Կարմիրգյուղի թիվ 1 միջնակարգ դպրոց | 32 | 16 | 50,0 | 2 | 6,3 |
| Գեղարքունիք | Ծակքարի միջնակարգ դպրոց | 18 | 9 | 50,0 | 1 | 5,6 |
| Արագածոտն | Արագածի թիվ 1 միջնակարգ դպրոց | 16 | 8 | 50,0 | | |
| Արագածոտն | Ծաղկահովիտի միջնակարգ դպրոց | 12 | 6 | 50,0 | | |
| Արագածոտն | Գեղաձորի միջնակարգ դպրոց | 10 | 5 | 50,0 | | |
| **5-10 շրջանավարտ ունեցած դպրոցներ** | | | | | | |
| Արագածոտն | Ծաղկաշենի միջնակարգ դպրոց | 6 | 4 | 66,7 | 1 | 16,7 |

Բարձրլեռնային գյուղերի՝ 5-10 շրջանավարտ ունեցած դպրոցներից բուհ ընդունված շրջանավարտների 50-ից բարձր տոկոս է արձանագրվել միայն Արագածոտնի մարզի Ծաղկաշենի միջնակարգ դպրոցում (66,7%՝ 6 շրջանավարտից ընդունվել է 4-ը):

## 4.6 ՀԱՅՏԱԳՐՎԱԾ ԵՎ ԲՈՒՀ ԸՆԴՈՒՆՎԱԾ ԴԻՄՈՐԴՆԵՐԻ ՍԵՌԱՅԻՆ ԿԱԶՄԸ

2023 թ. բուհերում հայտագրված 13416 դիմորդներից 7871-ը (58,7%) եղել են իգական սեռի ներկայացուցիչներ, 5545-ը (41,3%)՝ արական սեռի: Մրցույթի հիմնական և լրացուցիչ փուլերով ընդունված 10201 դիմորդներից 6287-ը (61,6%) եղել են իգական, 3914-ը (38,4%)՝ արական սեռի:

Դիագրամ 6. 2023 թ. բուհերում հայտագրված և ընդունված դիմորդների սեռային կազմը




Դիագրամ 7. 2023 թ. բուհերում հայտագրված և ընդունված դիմորդների սեռային կազմը ըստ ՀՀ վարչատարածքային միավորների



## 4.7 2023 Թ. ԱՄԵՆԱՊԱՀԱՆՋՎԱԾ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Աղյուսակ 22-ում ներկայացված են դիմորդների շրջանում 2023 թվականին ՀՀ պետական բուհերի 10 ամենապահանջված մասնագիտությունները:

**Աղյուսակ 22. 2023 թ. ամենապահանջված մասնագիտությունների տասնյակը**

| Բուհը [1] | Մասնագիտությունը | Դիմումների թիվը հիմնական փուլում | Տեղերի թիվը | | Ընդունվածների թիվը [2] | | Անցողիկ միավորը [3] | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | անվճար | վճարովի | անվճար | վճարովի | անվճար | վճարովի |
| ԵՊԲՀ | Բուժական գործ | 669 | 60 | 390 | 66 | 396 | 9 | 27,75 |
| ՀՊՏՀ | Կառավարում (ըստ ոլորտի) | 328 | 11 | 189 | 12 | 192 | 37,5 | 25,5 |
| ՀՊՏՀ | Ֆինանսներ (ըստ ոլորտի) | 325 | 11 | 189 | 11 | 191 | 37,5 | 25,25 |
| ԵՊՀ | Իրավագիտություն | 307 | 2 | 138 | 6 | 141 | 40 | 37 |
| ՃՇՀԱՀ | Ճարտարապետություն | 277 | 15 | 213 | 21 | 213 | 36,15 | 19,15 |
| ՀՊՏՀ | Տնտեսագիտություն | 276 | 11 | 188 | 11 | 193 | 35,5 | 16,5 |
| ԵՊԲՀ | Ստոմատոլոգիա | 271 | 7 | 130 | 8 | 137 | 35,5 | 24 |
| ՀՊՏՀ | Հաշվապահական հաշվառում և հարկում (ըստ ոլորտի) | 267 | 8 | 191 | 9 | 193 | 35,75 | 17,75 |
| ԵՊՀ | Ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա | 260 | 28 | 166 | 28 | 169 | 38 | 24,5 |
| ՀՊՏՀ | Շուկայագիտություն (մարքեթինգ) /ըստ ոլորտի/ | 258 | 7 | 142 | 8 | 146 | 37,25 | 24,5 |
| **Ընդամենը** | | **3338** | 160 | 1936 | 180 | 1971 | | |
| | | | **2096** | | **2151** | | | |

[1]- Երևանում գործող բուհերի տվյալներում ընդգրկված չեն մարզերում գործող մասնաճյուղերի տվյալները:
[2]- Ընդունվածների թիվը որոշ մասնագիտությունների դեպքում մեծ է նախատեսված տեղերի թվից, քանի որ դրանցում ներառված են նաև արտոնություններով և ԿԳՄՍՆ ավելացրած տեղերով (հավասար միավորների դեպքում) ընդունվածների թվերը:
[3] Անցողիկ միավորներում ներառված չեն արտոնություններով ընդունվածների ցուցանիշները:

Աղյուսակ 22-ում երևում է, որ 2023 թ. ամենապահանջված 10 մասնագիտություններն ընտրել է բուհ և մասնագիտություն հայտագրած 13314 դիմորդներից 3338-ը (25.1%): Այդ մասնագիտություններից դիմումների թվով առաջատարը եղել է ԵՊԲՀ-ի «Բուժական գործ» մասնագիտությունը, որն ընտրել է 669 դիմորդ: Երկրորդ և երրորդ տեղերում եղել են ՀՊՏՀ-ի «Կառավարում» և «Ֆինանսներ» մասնագիտությունները: Առաջատար երեք մասնագիտությունները հայտագրած դիմորդները կազմել են բոլոր բուհերում հայտագրվածների 10%-ը և ամենապահանջված մասնագիտությունների տասնյակն ընտրած դիմորդների 39.6%-ը:

Հետևյալ աղյուսակում ներկայացված են 2023 թ. ՀՀ վարչատարածքային միավորների դիմորդների շրջանում ամենապահանջված մասնագիտությունների հնգյակները: Տոկոսները հաշվարկված են տվյալ վարչատարածքային միավորի համապատասխան ընդհանուր ցուցանիշներից:

**Աղյուսակ 23. 2023 թ. ամենապահանջված մասնագիտությունների հնգյակները ըստ ՀՀ վարչատարածքային միավորների**

| Բուհը | Մասնագիտությունը | | Հայտագրվածների թիվը 1-ին հայտով | Ընդունվածների թիվը | որ թվում՝ 1-ին տեղում հայտով |
|---|---|---|---|---|---|
| **Երևան** | | | | | |
| ԵՊԲՀ | Բուժական գործ | | 269 | 196 | 8 |
| ՃՇՀԱՀ | Ճարտարապետություն | | 167 | 146 | 13 |
| ԵՊՀ | Իրավագիտություն | | 142 | 68 | 2 |
| ՀՊՏՀ | Կառավարում (ըստ ոլորտի) | | 125 | 71 | 2 |
| ՀՊՏՀ | Ֆինանսներ (ըստ ոլորտի) | | 123 | 71 | 4 |
| | Ընդամենը՝ հնգյակում | թիվը | 827 | 532 | 29 |
| | | տոկոսը | 14,1 | 15,5 | 4,4 |
| **Երևանի դիմորդների ընդհանուր թիվը** | | | **5873** | **3560** | **663** |
| **Արագածոտն** | | | | | |
| ԵՊԲՀ | Բուժական գործ | | 20 | 13 | |
| ՀՊՏՀ | Ֆինանսներ (ըստ ոլորտի) | | 17 | 8 | |
| ԲՊՀ | Սերվիս | | 17 | 12 | |
| ՀՊՏՀ | Հաշվապահական հաշվառում և հարկում (ըստ ոլորտի) | | 16 | 12 | |
| ԵՊՀ | Ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա | | 13 | 12 | |
| | Ընդամենը՝ հնգյակում | թիվը | 83 | 57 | 0 |
| | | տոկոսը | 16,9 | 14,1 | 0,0 |
| **Արագածոտնի մարզի դիմորդների ընդհանուր թիվը** | | | **490** | **405** | **37** |
| **Արարատ** | | | | | |
| ԵՊԲՀ | Բուժական գործ | | 33 | 23 | 2 |
| ՀՊՏՀ | Հաշվապահական հաշվառում և հարկում (ըստ ոլորտի) | | 23 | 19 | 1 |
| ՀՊՏՀ | Ֆինանսներ (ըստ ոլորտի) | | 22 | 10 | |
| ՀԱՊՀ | Համակարգչային ճարտարագիտություն | | 22 | 18 | 10 |
| ԵՊՀ | Իրավագիտություն | | 21 | 12 | |
| | Ընդամենը՝ հնգյակում | թիվը | 121 | 82 | 13 |
| | | տոկոսը | 16,6 | 12,0 | 9,8 |
| **Արարատի մարզի դիմորդների ընդհանուր թիվը** | | | **728** | **682** | **132** |
| **Արմավիր** | | | | | |
| ԵՊԲՀ | Բուժական գործ | | 36 | 28 | 3 |
| ՀՊՏՀ | Հաշվապահական հաշվառում և հարկում (ըստ ոլորտի) | | 34 | 26 | 1 |
| ՀՊՏՀ | Տնտեսագիտություն | | 33 | 24 | |
| ՀՊՏՀ | Կառավարում (ըստ ոլորտի) | | 32 | 27 | 1 |
| ՀԱՊՀ | Տեղեկատվական համակարգեր | | 27 | 16 | 5 |
| | Ընդամենը՝ հնգյակում | թիվը | 162 | 121 | 10 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | տոկոսը | 21,0 | 16,6 | 9,0 |
| **Արմավիրի մարզի դիմորդների ընդհանուր թիվը** | | | **771** | **729** | **111** |
| **Գեղարքունիք** | | | | | |
| ԵՊԲՀ | Բուժական գործ | | 47 | 36 | 4 |
| ՀՊՏՀ | Կառավարում (ըստ ոլորտի) | | 32 | 18 | 2 |
| ՀՊՏՀ | Հաշվապահական հաշվառում և հարկում (ըստ ոլորտի) | | 21 | 13 | |
| ՀՊՏՀ | Տնտեսագիտություն | | 19 | 18 | |
| ԵՊՀ | Միջազգային հարաբերություններ | | 18 | 13 | |
| **Ընդամենը՝ հնգյակում** | | թիվը | 137 | 98 | 6 |
| | | տոկոսը | 20,6 | 16,1 | 5,6 |
| **Գեղարքունիքի մարզի դիմորդների ընդհանուր թիվը** | | | **665** | **608** | **107** |
| **Լոռի** | | | | | |
| ՎՊՀ | Կառավարում (ըստ ոլորտի) | | 55 | 42 | 3 |
| ԵՊԲՀ | Բուժական գործ | | 47 | 40 | 3 |
| ՎՊՀ | Ֆիզիկական դաստիարակություն և սպորտային մարզումներ | | 42 | 29 | 3 |
| ՎՊՀ | Անգլերեն և գրականություն | | 41 | 38 | 2 |
| ՎՊՀ | Սերվիս | | 41 | 27 | 4 |
| **Ընդամենը՝ հնգյակում** | | թիվը | 226 | 176 | 15 |
| | | տոկոսը | 25,3 | 22,1 | 8,7 |
| **Լոռու մարզի դիմորդների ընդհանուր թիվը** | | | **894** | **795** | **173** |
| **Կոտայք** | | | | | |
| ԵՊԲՀ | Բուժական գործ | | 53 | 37 | 2 |
| ՀՊՏՀ | Ֆինանսներ (ըստ ոլորտի) | | 50 | 42 | 3 |
| ՀՊՏՀ | Շուկայագիտություն (մարքեթինգ), (ըստ ոլորտի) | | 46 | 32 | 2 |
| ՀՊՏՀ | Կառավարում (ըստ ոլորտի) | | 38 | 27 | 3 |
| ՀՊՏՀ | Հաշվապահական հաշվառում և հարկում (ըստ ոլորտի) | | 34 | 27 | |
| **Ընդամենը՝ հնգյակում** | | թիվը | 221 | 165 | 10 |
| | | տոկոսը | 24,0 | 17,9 | 5,4 |
| **Կոտայքի մարզի դիմորդների ընդհանուր թիվը** | | | **922** | **921** | **186** |
| **Շիրակ** | | | | | |
| ԵՊԲՀ | Բուժական գործ | | 58 | 47 | 6 |
| ՀՊՏՀ ԳՄ | Ֆինանսներ (ըստ ոլորտի) | | 45 | 37 | 4 |
| ՀՊՏՀ ԳՄ | Կառավարում (ըստ ոլորտի) | | 44 | 36 | 4 |
| ՇՊՀ | Հոգեբանություն | | 34 | 20 | 5 |
| ՀՊՏՀ ԳՄ | Շուկայագիտություն (մարքեթինգ), (ըստ ոլորտի) | | 33 | 25 | 2 |
| **Ընդամենը՝ հնգյակում** | | թիվը | 214 | 165 | 21 |
| | | տոկոսը | 21,6 | 18,1 | 8,8 |
| **Շիրակի մարզի դիմորդների ընդհանուր թիվը** | | | **990** | **912** | **238** |
| **Սյունիք** | | | | | |
| ԵՊԲՀ | Բուժական գործ | | 34 | 29 | 3 |
| ՀՊՏՀ | Կառավարում (ըստ ոլորտի) | | 24 | 20 | |
| ՀՊՏՀ | Ֆինանսներ (ըստ ոլորտի) | | 23 | 16 | 1 |
| ԳՊՀ (Գորիս) | Տնտեսագիտություն | | 23 | 14 | 1 |
| ՀԱՊՀ (Կապան) | Տեղեկատվական տեխնոլոգիաներ | | 19 | 11 | 6 |
| **Ընդամենը՝ հնգյակում** | | թիվը | 123 | 90 | 11 |
| | | տոկոսը | 20,3 | 17,4 | 9,8 |
| **Սյունիքի մարզի դիմորդների ընդհանուր թիվը** | | | **607** | **518** | **112** |
| **Վայոց ձոր** | | | | | |
| ԵՊԲՀ | Բուժական գործ | | 11 | 8 | 1 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| ՀՊՏՀ | Տնտեսագիտություն | | 10 | 6 | 1 |
| ԲՊՀ | Սերվիս | | 9 | 8 | |
| ՀԱԱՀ | Ագրոբիզնես և ֆինանսներ | | 8 | 3 | |
| ՀՊՏՀ | Հաշվապահական հաշվառում և հարկում (ըստ ոլորտի) | | 7 | 4 | |
| **Ընդամենը՝ հնգյակում** | | թիվը | 45 | 29 | 2 |
| | | տոկոսը | 21,7 | 17,4 | 7,4 |
| **Վայոց ձորի մարզի դիմորդների ընդհանուր թիվը** | | | **207** | **167** | **27** |
| **Տավուշ** | | | | | |
| ԵՊՀ (Իջևան) | Ֆինանսներ (ըստ ոլորտի) | | 42 | 29 | 5 |
| ԵՊՀ (Իջևան) | Զբոսաշրջություն | | 27 | 14 | 3 |
| ԵՊՀ (Իջևան) | Ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա | | 24 | 17 | 10 |
| ԵՊՀ (Իջևան) | Անգլերեն և գրականություն | | 21 | 19 | 4 |
| ԵՊԲՀ | Բուժական գործ | | 20 | 14 | 1 |
| **Ընդամենը՝ հնգյակում** | | թիվը | 134 | 93 | 23 |
| | | տոկոսը | 23,5 | 19,3 | 28,8 |
| **Տավուշի մարզի դիմորդների ընդհանուր թիվը** | | | **571** | **481** | **80** |

Աղյուսակ 23-ում տեսնում ենք, որ բացի Լոռու և Տավուշի մարզերից, մնացած բոլոր վարչատարածքային միավորներում ամենապահանջվածը 2023 թվականին եղել է ԵՊԲՀ-ի «Բուժական գործ» մասնագիտությունը: Դիտարկված մասնագիտությունների հնգյակներում հաճախադեպությամբ աչքի են ընկել ՀՊՏՀ-ի «Կառավարում», «Ֆինանսներ», «Տնտեսագիտություն», «Հաշվապահական հաշվառում և հարկում» մասնագիտությունները:

Աղյուսակում ըստ նշված մասնագիտությունների ներկայացվել են նաև հայտագրվածների, ընդունվածների, ինչպես նաև առաջին անվճար հայտով (հիմնական և լրացուցիչ փուլերի) ընդունվածների գումարային ցուցանիշները և դրանց տոկոսները՝ հաշվարկված տվյալ վարչատարածքային միավորի համապատասխան ընդհանուր ցուցանիշներից: Այդ առումով ամենապահանջված մասնագիտությունների հնգյակում հայտագրածների և ընդունվածների ամենաբարձր տոկոսներն արձանագրվել են Լոռու մարզում (մարզից հայտագրվածների 25,3%-ը, ընդունվածների 22,1%-ը), հայտագրվածների և ընդունվածների ամենացածր տոկոսները, համապատասխանաբար, Երևանում (14,1%) և Արարատի մարզում (12%): Դիտարկված մասնագիտությունների հնգյակներում առաջին անվճար հայտերով ընդունվածների ամենաբարձր տոկոսն արձանագրվել է Տավուշի մարզում (28,8%): Արագածոտնի մարզի պահանջված մասնագիտությունների հնգյակն ընտրածներից ոչ ոք առաջին անվճար հայտով չի ընդունվել:

# ԱՄՓՈՓՈՒՄ

- *Ընդունելության քննություններ*

2023 թվականի բուհերի ընդունելության քննությունների հայտագրումն ու անցկացումն իրականացվել է երեք փուլով: Գնահատման և թեստավորման dimord.am կայքում առաջին փուլի հայտագրման գործընթացն իրականացվել է 2022 թ. դեկտեմբերի 15-ից 25-ը, երկրորդ փուլինը՝ 2023 թ. ապրիլի 15-ից մայիսի 10-ը, երրորդինը՝ 2023 թ. հունիսի 26-ից հուլիսի 1-ը: Բուհերի ընդունելության քննությունների առաջին փուլն անցակացվել է 2023 թ. հունվար-փետրվար ամիսներին, երկրորդը՝ հունիսին, երրորդը՝ հուլիսի առաջին տասնօրյակում:

Հայտագրման երեք փուլերում dimord.am կայքով մուտքագրվել է 20965 դիմում-հայտ: Առաջին փուլում 6856 դիմորդ հայտագրել է միասնական քննություններ, երկրորդ փուլում 13951 դիմորդ հայտագրել է միասնական և ներբուհական քննություններ: Նրանցից 11702-ը դիմում-հայտում նշել են միասնական, 2249-ը՝ ներբուհական քննություններ: Ներբուհական քննություն հայտագրածներից 38-ի ընտրած մասնագիտությունների ընդունելության համար պահանջվել է մեկական ներբուհական և միասնական քննություն: Երրորդ փուլում 158 դիմորդ միասնական և ներբուհական քննություններ է հայտագրել (միասնական՝ 98 դիմորդ, ներբուհական՝ 60):

2023 թ. առնվազն մեկ միասնական քննություն է հայտագրել 18656 դիմորդ (առաջին փուլ՝ 6856, երկրորդ փուլ՝ 11702, երրորդ փուլ՝ 98):

Առաջին փուլում հայտագրվածներից 6574-ը, երկրորդ փուլում՝ 13020-ը, երրորդ փուլում՝ 77-ը եղել են ՀՀ քաղաքացիներ:

Առաջին փուլում հայտագրված դիմորդներից 5714-ը 2022/2023 ուստարում դեռևս սովորելիս են եղել 12-րդ դասարանում (ՀՀ-ից՝ 5560 դիմորդ): Երկրորդ և երրորդ փուլերում հայտագրվածներից 12788-ը եղել են 2023 թվականի շրջանավարտներ (ՀՀ-ից՝ 11832 դիմորդ):

Միասնական քննությունների առաջին փուլում բացակայությունները չեն գերազանցել մասնակիցների թվի 6,3%-ը, երկրորդ փուլում՝ 6,8%-ը, երրորդ փուլում՝ 25%-ը: Վերջինս քննության հայտագրվածների փոքր թվի պատճառով վիճակագրորեն նշանակալի չէ: Քննության անցկացման կարգի խախտման պատճառով առաջին փուլում քննությունից հեռացվել է 31, երկրորդ փուլում՝ 38, երրորդ փուլում՝ 2 դիմորդ: Հիվանդության պատճառով առաջին փուլում քննությունն ընդհատել է 2, երկրորդ փուլում՝ 37 դիմորդ:

Հանրակրթական ուսումնական հաստատություններում ուսումնասիրվող առարկաների միասնական քննությունների ընդհանուր միջին միավորներն առաջին փուլում բաշխվել են 9,7-ից (ռուսաց լեզու) մինչև 14,9 (ֆրանսերեն) միջակայքում, երկրորդ փուլում՝ 10,5-ից (ռուսաց լեզու) մինչև 13,7 (գերմաներեն), երրորդ փուլում՝ 7,3-ից (ռուսաց

լեզու) մինչև 11,3 (անգլերեն):

Քննությունների մեծ մասի դեպքում առաջին փուլի համեմատությամբ «անբավարար» գնահատականների տոկոսը երկրորդ փուլում նվազել է: Հակառակ պատկերն է եղել կենսաբանության, աշխարհագրության և հայոց պատմության քննությունների արդյունքներում: Նշված առարկաների դեպքում երկրորդ փուլում նվազել է 18-20 միավոր հավաքած դիմորդների տոկոսը: Դրական միավորի շեմը չհաղթահարած դիմորդների թիվը ֆիզիկայի, քիմիայի և ռուսաց լեզվի քննությունների երեք փուլերում էլ եղել է 20 տոկոս և ավելի: Երեք փուլերում մաթեմատիկայից և ռուսաց լեզվից 18-20 միավոր հավաքած դիմորդների թիվը եղել է 10 տոկոսից ցածր:

Միասնական քննությունների ամենաբարձր միջին միավորներով առաջին և երկրորդ փուլերում ՀՀ վարչատարածքային միավորներից առաջատարը եղել է Կոտայքի մարզը:

Բնակավայրերի տիպերից միասնական քննությունների ամենաբարձր միջին միավորներով աչքի են ընկել քաղաքային բնակավայրերը:

Հանրակրթական ուսումնական հաստատություններից 2023 թվականին ամենաբարձր միջին միավորների քանակով առաջատարը եղել են վարժարանները:

2023 թ. ընդունելության քննությունների առաջին փուլում հայտագրված դիմորդների 42.5%-ը եղել են արական սեռի, 57.5%-ը՝ իգական սեռի դիմորդներ, երկրորդ և երրորդ փուլերում միասին վերցրած՝ 41.3%-ը արական սեռի, 58.7%-ը՝ իգական սեռի դիմորդներ:

- ***Բուհերի ընդունելության մրցույթը***

2023 թ. ՀՀ բուհերի՝ ԳԹԿ-ի կողմից կազմակերպված ընդունելության մրցույթի համար նախատեսված է եղել անվճար հիմունքներով ուսուցման 2128 տեղ, վճարովի հիմունքներով՝ 15984:

2023 թ. dimord.am կայքում հայտագրվել է 14109 դիմորդ: Բուհ և մասնագիտություն է հայտագրել 13314 դիմորդ, որոնցից առնվազն մեկ միասնական քննություն պահանջող մասնագիտություն է հայտագրել 11005-ը, առնվազն մեկ ներբուհական քննություն պահանջող՝ 2309-ը: 102 դիմորդ քննություն է հայտագրել ռազմական բուհ ընդունվելու նպատակով: 693 դիմորդ միասնական քննություն է հայտագրել առանց բուհ և մասնագիտություն նշելու:

Բուհերի ընդունելության մրցույթը կազմակերպվել է երկու փուլով: Բուհ և մասնագիտություն հայտագրած 13314 դիմորդներից ընդունվել է 10201-ը (76,6%): Նրանցից 9166-ն (ընդունվածների 89,9%-ը) ընդունվել է մրցույթի առաջին փուլում, 1035-ը (10,1%)՝ երկրորդում: Պետական բուհեր է ընդունվել 9997 դիմորդ (ընդունվածների 98%-ը), ոչ պետական բուհեր՝ 204-ը (2%):

Երկու միասնական քննությունների արդյունքներով բուհ է ընդունվել 8271 դիմորդ (81.1%) երկու ներբուհական քննությունների արդյունքներով՝ 1909-ը (18.7%), մեկ միասնական և մեկ ներբուհական քննությունների արդյունքներով՝ 21-ը (0.2%):

Միասնական և ներբուհական քննությունների արդյունքներով ընդունված 10201 դիմորդներից ուսուցման անվճար հիմունքներով ընդունվել է 1972-ը (1895-ը՝ առաջին

փուլում, 77-ը՝ երկրորդում), վճարովի հիմունքներով՝ 8229-ը (7271-ն՝ առաջին փուլում, 958-ը՝ երկրորդում): Անվճար հիմունքներով ընդունվածներից 89-ն ընդունվել են պահուստային տեղերով (արտոնություններով) և նպատակային պետական անվճար տեղերով (86-ն առաջին փուլում, 3-ը՝ երկրորդում): Վճարովի հիմունքներով ընդունվածներից պահուստային տեղերով ընդունվել են 38-ը (36-ն՝ առաջին փուլում, 2-ը՝ երկրորդում): Ընդհանուր հաշվով պահուստային տեղերով (արտոնություններով) ընդունվել է 102 դիմորդ, նպատակային պետական անվճար տեղերով՝ 25 (ընդամենը՝ 127 դիմորդ):

2023 թ. բուհ ընդունված առաջին կուրսի ուսանողների համար պարտադիր զինվորական ծառայությունից ՀՀ Կառավարության սահմանած տարկետման իրավունքը խթանել է այդ ցանկի մասնագիտություններին (ԵՊՀ-ի «Ֆիզիկա», «Միջուկային ռեակտորների ֆիզիկա», «Նանոֆիզիկա և առաջատար տեխնոլոգիաներ», «Երկակի նշանակության տեխնոլոգիաների ֆիզիկա», «Ռադիոֆիզիկա», «Քիմիա» և ՀԱՊՀ-ի «Ատոմային էներգետիկա», «Հեռահաղորդակցություն և ազդանշանների մշակում», «Մեքենաշինություն և նյութերի մշակում», «Թռչող ապարատների ավիացիոն սարքավորումներ») հատկացված տեղերի համալրումը: Ամբողջությամբ լրացել են անվճար տեղերը: ԵՊՀ-ի վեց մասնագիտություններից հինգի վճարովի տեղերը ևս լրացել են ամբողջությամբ: Թափուր են մնացել միայն «Քիմիա» մասնագիտության վճարովի տեղերը: ՀԱՊՀ-ում մասամբ լրացել են «Ատոմային էներգետիկա» (50%-ով), «Մեքենաշինություն և նյութերի մշակում» (30%-ով) և «Թռչող ապարատների ավիացիոն սարքավորումներ» (65.4%-ով) մասնագիտությունների վճարովի տեղերը: «Հեռահաղորդակցություն և ազդանշանների մշակում» մասնագիտության վճարովի տեղերը լրացել են ամբողջությամբ:

2023 թ. տասը և ավելի շրջանավարտներ ունեցած ՀՀ հանրակրթական ուսումնական հաստատություններից բուհ ընդունվածների բարձր տոկոս ապահովածների լավագույն տասնյակում տեղ են գտել 71.1-80.6% արձանագրածները, որոնցից առաջատարը եղել է ՀԱՊՀ Երևանի ավագ դպրոցը (80.6%): Բուհ ընդունվածների ամենամեծ թիվն այդ ցանկում ապահովել է այդ դպրոցը, որի 299 շրջանավարտներից ընդունվել են 241-ը:

Սահմանամերձ գյուղերում 2023 թ. տասը և ավելի շրջանավարտ ունեցած և բուհ ընդունված շրջանավարտների բարձր տոկոսով առաջատար դպրոցը եղել է Տավուշի մարզի Կողբի թիվ 2 միջնակարգ դպրոցը (75%), իսկ բարձր լեռնային գյուղերում՝ Գեղարքունիքի մարզի Սարուխանի թիվ 1 միջնակարգ դպրոցը (81,8%): Սահմանամերձ գյուղերի 5-10 շրջանավարտ ունեցած և բուհ ընդունված շրջանավարտների բարձր տոկոսով առաջատար դպրոցը եղել է Տավուշի մարզի Բաղանիսի միջնակարգ դպրոցը (100%), իսկ բարձր լեռնային գյուղերից միակ դպրոցը եղել է Արագածոտնի մարզի Ծաղկաշենի միջնակարգ դպրոցը (66,7%):

2023 թվականին դիմորդների նախընտրած մասնագիտություններից ամենապահանջվածների տասնյակը գլխավորել է ԵՊԲՀ-ի «Բուժական գործ» մասնագիտությունը: Երկրորդը և երրորդը եղել են ՀՊՏՀ-ի «Կառավարում» և «Ֆինանսներ»

մասնագիտությունները: Առաջատար երեք մասնագիտությունները հայտագրած դիմորդները կազմել են 2023 թ. բոլոր բուհերում հայտագրվածների 10%-ը և ամենապահանջված մասնագիտությունների տասնյակն ընտրած դիմորդների 39.6%-ը:

2023 թ. Երևանում և մարզերում ամենապահանջված մասնագիտությունը եղել է ԵՊԲՀ-ի «Բուժական գործ» մասնագիտությունը, որի հետ առաջին երեք տեղերը մեծամասամբ զբաղեցրել են «Ֆինանսներ» և «Կառավարում» մասնագիտությունները:

## ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ

1. 2023 թ. միասնական քննությունների, ինչպես նաև բուհերի ընդունելության մրցույթի դիմորդների հաշվառման էլեկտրոնային տվյալների բազաներ

2. ՀՀ պետական և ոչ պետական բարձրագույն ուսումնական հաստատությունների ընդունելության կարգ, https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=177708

3. Վերլուծություն՝ «2022 թ. միասնական քննությունների և բուհերի ընդունելության մրցույթի արդյունքները», http://www.atc.am

4. 2023/2024 ուսումնական տարվա՝ պետության կողմից ուսանողական նպաստների ձևով ուսման վարձի լրիվ փոխհատուցմամբ (անվճար) և վճարովի, առկա ուսուցմամբ բակալավրի ու անընդհատ և ինտեգրացված կրթական ծրագրերով ընդունելության տեղերի ցանկ

# ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

## ՀԱՎԵԼՎԱԾ 1. ՄԻԱՍՆԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՅՏԱԳՐՈՒՄԸ ԵՎ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

Դիմորդների ընտրած մասնագիտության և տվյալ մասնագիտության համար սահմանված քննությունների առաջին փուլի առցանց հայտագրումը սկսվել է 2022 թ. դեկտեմբերի 15-ին և ավարտվել դեկտեմբերի 25-ին, երկրորդ փուլինը՝ 2023 թ. ապրիլի 15-ին և ավարտվել մայիսի 10-ին (համաձայն «Հայաստանի Հանրապետության պետական և ոչ պետական բարձրագույն ուսումնական հաստատություններ ընդունելության (ըստ բակալավրի ու անընդհատ և ինտեգրված կրթական ծրագրերի) կարգի»):

Դիմորդները հայտագրման առաջին փուլում դիմում-հայտում լրացրել են միասնական քննություններ՝ առանց բուհ և մասնագիտություն նշելու: Երկրորդ փուլում լրացրել են մասնագիտությունների և ընդունելության քննությունների՝ ցանկով նախատեսված մեկ բուհի և մեկ մասնագիտության անվանումը, տվյալ մասնագիտությամբ սովորելու համար պահանջվող ընդունելության քննությունները: «Ընդունելության քննություններ» բաժնի սյունակում միասնական քննությունների առարկաները «կամ» բառով տարանջատված լինելու դեպքում դիմորդներին թույլատրվել է ընտրել նշված քննություններից մեկը:

ՀՀ երկքաղաքացիների և օտարերկրացիների, օտարերկրյա պետությունների ուսումնական հաստատությունները տվյալ ուսումնական տարում ավարտած ՀՀ քաղաքացիների, առաջին փուլում ընդունելության դիմում-հայտ չներկայացրած ՀՀ քաղաքացիների, տվյալ տարվա գարնանային զորակոչից զորացրված կամ մինչև հուլիսի 31-ը զորացրվող դիմորդների, նախնական և միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների տվյալ տարվա շրջանավարտների փաստաթղթերն ընդունվել են հունիսի 26-ից մինչև հուլիսի 1-ը՝ մինչև ժամը 17-ը:

Հայտագրման յուրաքանչյուր փուլում, դիմում-հայտերի տվյալների մուտքագրման ավարտից հետո, ըստ քննական առարկաների և կենտրոնների ԳԹԿ-ում պատրաստվել են դիմորդների ցուցակները, որոնց հիման վրա դիմորդներին և նրանց ԳԹԿ անձնական համար տրամադրած դպրոցներին էլեկտրոնային եղանակով ուղարկվել են միասնական քննությունների անցաթղթերը:

Միասնական քննությունները կազմակերպվել և անցկացվել են քննական կենտրոններում: Քննությունների անցկացման գործընթացին մասնակցել են քննական կենտրոնի ղեկավարը, ԳԹԿ-ի ներկայացուցիչները, քննության ընթացքի կազմակերպիչները, համակարգչային օպերատորը, քննական կենտրոնի հերթապահը, որոնք իրենց աշխատանքը քննությունների ընթացքում իրականացրել են ԳԹԿ-ի տնօրենի կողմից հաստատված աշխատակարգերի համաձայն:

## ՀԱՎԵԼՎԱԾ 2. 2023 Թ. ՄԻԱՍՆԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ

| ՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ | ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆԸ (ժամ) | ՔՆՆՈՒԹՅԱՆ ՕՐԸ | | |
|---|---|---|---|---|
| | | Առաջին փուլ | Երկրորդ փուլ | Երրորդ փուլ |
| Քիմիա<br>Ռուսաց լեզու | 3<br>2.5 | 15.01.2023 թ. | 09.06.2023 թ. | 04.07.2023 թ. |
| Օտար լեզուներ | 2.5 | 22.01.2023 թ. | 13.06.2023 թ. | 05.07.2023 թ. |
| Հայոց լեզու և հայ գրականություն | 3 | 29.01.2023 թ. | 20.06.2023 թ. | 07.07.2023 թ. |
| Մաթեմատիկա | 3 | 04.02.2023 թ. | 16.06.2023 թ. | 06.07.2023 թ. |
| Կենսաբանություն<br>Աշխարհագրություն | 3 | 05.02.2023 թ. | 23.06.2023 թ. | 08.07.2023 թ. |
| Հայոց պատմություն<br>Ֆիզիկա | 3 | 12.02.2023 թ. | 27.06.2023 թ. | 09.07.2023 թ. |

## ՀԱՎԵԼՎԱԾ 3. ՄԻԱՍՆԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹԵՍՏԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ

Միասնական քննությունների թեստերը կազմված են լինում պատասխանի ընտրությամբ և կարճ պատասխանով առաջադրանքներից, առարկաների մի մասի դեպքում՝ պնդումների փնջերից:

Պատասխանի ընտրությամբ առաջադրանքներում պատասխանի չորս հնարավոր տարբերակներից ճիշտ է միայն մեկը:

Կարճ պատասխանով առաջադրանքների երկու տիպերից մեկի դեպքում պատասխանը մեկ թիվ է կամ մի քանի թվեր, որոնց հաջորդականությունը պահպանելը պարտադիր է: Մյուս տիպի դեպքում թվային հաջորդականության պահպանումը պարտադիր չէ:

Պնդումների փունջը կազմվում է վեց պնդումներից, որոնցից յուրաքանչյուրի հնարավոր պատասխաններն են՝ «Ճիշտ է», «Սխալ է», «Չգիտեմ», և դրանցից պետք է ընտրել միայն մեկը:

Բոլոր թեստերի առավելագույն միավորը 80 է: Գնահատման 80 միավորանոց սանդղակից 20 միավորանոց սանդղակին անցումը կատարվում է՝

$$Մ=0.25 * Մ_{80}$$

բանաձևով, որտեղ Մ-ն միավորն է 20 միավորանոց սանդղակում, $Մ_{80}$-ը՝ 80 միավորանոց սանդղակում:

20 միավորանոց սանդղակում դրական են համարվում 7.5 և ավելի միավորները:

Բոլոր թեստերում ընտրովի և կարճ պատասխանով յուրաքանչյուր առաջադրանքի

ճիշտ պատասխանի համար ըստ գնահատման 20 միավորանոց սանդղակի տրվում է 0.25 միավոր (ըստ 80 միավորանոց սանդղակի՝ 1 միավոր):

Պնդումների փնջերի յուրաքանչյուր պնդման ճիշտ պատասխանի համար գնահատման 20 միավորանոց սանդղակում տրվում է 0.25 միավոր, յուրաքանչյուր սխալ պատասխանի դեպքում պնդումների տվյալ փնջին տրվելիք միավորներից հանվում է 0.25 միավոր: «Չգիտեմ» պատասխանի դեպքում միավոր չի տրվում և չի հանվում: Ամբողջ փնջին միավոր չի տրվում նաև պնդումների փնջի միավորների գումարի արդյունքում ստացված բացասական թվի կամ 0-ի դեպքում: Այլ առաջադրանքներից հավաքած միավորների վրա տվյալ փնջի միավորները չեն ազդում:

## ՀԱՎԵԼՎԱԾ 4. ՄԻԱՍՆԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԵՐԸ ԵՎ ՄԻՋԻՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԸ 2007-2022 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ

*Մասնակիցների թիվը և միջին միավորը ներկայացնում են քննությունների երկու փուլերը միասին*

| Տարեթիվը | Հայոց լեզու և հայ գրականություն | | Մաթեմատիկա | | Անգլերեն | | Ռուսաց լեզու | | Գերմաներեն | | Ֆրանսերեն | | Ֆիզիկա | | Հայոց պատմություն | | Կենսաբանություն | | Քիմիա | | Համաշխ. պատմություն | | Աշխարհագրություն | | Իսպաներեն | | Իտալերեն | | Պարսկերեն | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | Մասնակիցների թիվը | Միջին միավորը | Մասնակիցների թիվը | Միջին միավորը | Մասնակիցների թիվը | Միջին միավորը | Մասնակիցների թիվը | Միջին միավորը | Մասնակիցների թիվը | Միջին միավորը | Մասնակիցների թիվը | Միջին միավորը | Մասնակիցների թիվը | Միջին միավորը | Մասնակիցների թիվը | Միջին միավորը | Մասնակիցների թիվը | Միջին միավորը | Մասնակիցների թիվը | Միջին միավորը | Մասնակիցների թիվը | Միջին միավորը | Մասնակիցների թիվը | Միջին միավորը | Մասնակիցների թիվը | Միջին միավորը | Մասնակիցների թիվը | Միջին միավորը | Մասնակիցների թիվը | Միջին միավորը |
| **2022** | 5209 | 11.9 | 5409 | 11.0 | 5577 | 13.7 | 341 | 11.0 | 94 | 14.7 | 65 | 13.3 | 1582 | 11.2 | 1461 | 12.7 | 1646 | 11.8 | 1251 | 12.8 | | | 127 | 12.7 | 2 | 12.1 | 2 | 19.1 | | |
| **2021** | 4115 | 12.3 | 5222 | 10.4 | 4386 | 14.5 | 274 | 12.2 | 85 | 13.8 | 74 | 14.7 | 1369 | 12.5 | 1457 | 14.6 | 1394 | 12.5 | 1146 | 13 | 29 | 13.2 | 189 | 14 | 2 | 12.1 | | | 2 | 13.5 |
| **2020** | 1712 | 10.7 | 5220 | 10.9 | 1773 | 14.7 | 169 | 12.3 | 57 | 15.5 | 52 | 15.7 | 190 | 11.6 | 1570 | 12 | 1078 | 13.1 | 341 | 16.2 | | | 282 | 12.4 | 5 | 14.1 | 3 | 14.5 | | |
| **2019** | 5701 | 11.4 | 4837 | 12 | 4821 | 13.8 | 456 | 11.1 | 126 | 13.9 | 88 | 15.1 | 1492 | 11.5 | 1443 | 11.5 | 1324 | 13 | 1100 | 12.2 | 41 | 13.6 | 244 | 13.5 | 4 | 13.3 | 1 | 18.5 | 5 | 12 |
| **2018** | 2715 | 12.2 | 2553 | 11.5 | 2183 | 14 | 264 | 9.6 | 81 | 14.9 | 51 | 14.9 | 983 | 11 | 726 | 12.3 | 685 | 13.5 | 584 | 12.4 | 41 | 12.2 | 148 | 13.1 | 2 | 13.25 | | | 1 | 13.75 |
| **2017** | 5307 | 12.9 | 4586 | 11.3 | 4158 | 14.4 | 544 | 10.2 | 119 | 15.6 | 126 | 15.6 | 1683 | 11.5 | 1331 | 12.1 | 1265 | 13.4 | 1098 | 12.7 | 90 | 14.7 | 282 | 12.1 | 6 | 14.3 | 2 | 17.1 | | |
| **2016** | 6336 | 13.7 | 5400 | 11.6 | 4833 | 14.1 | 652 | 9.8 | 192 | 15.3 | 173 | 15.9 | 1947 | 11.4 | 1440 | 13.3 | 1449 | 12.9 | 1183 | 12.9 | 134 | 14.4 | 356 | 13.5 | 10 | 16.2 | 3 | 15.1 | | |
| **2015** | 6991 | 13.7 | 5567 | 11.8 | 5243 | 14.2 | 781 | 10 | 230 | 14.9 | 194 | 15.3 | 1957 | 10.9 | 1673 | 13 | 1527 | 12.6 | 1194 | 12.6 | 133 | 13.3 | 332 | 13.8 | 13 | 12.4 | 1 | 18.75 | | |
| **2014** | 7602 | 13.2 | 6062 | 11.6 | 5441 | 13.9 | 910 | 10.6 | 284 | 14 | 230 | 15.8 | 2208 | 11.4 | 1906 | 12.9 | 1466 | 10.9 | 1143 | 12.4 | 141 | 12.6 | 317 | 13.4 | 15 | 16.5 | 2 | 18.6 | 1 | 7 |
| **2013** | 8931 | 13.1 | 6912 | 11.8 | 6361 | 15.4 | 1212 | 11 | 362 | 15.6 | 293 | 16.2 | 2489 | 11.5 | 2354 | 13.4 | 1788 | 14.1 | 1368 | 12.6 | 224 | 11.5 | 346 | 14.4 | 19 | 18.8 | 5 | 14.8 | 1 | 19.25 |
| **2012** | 11671 | 13.9 | 8831 | 11.6 | 7982 | 13.2 | 1242 | 10.3 | 525 | 14.4 | 438 | 14.3 | 3328 | 12.1 | 3126 | 10 | 1960 | 11.4 | 1537 | 10.8 | 384 | 12.2 | 387 | 12.3 | 24 | 17.9 | 4 | 15.4 | 5 | 16.4 |
| **2011** | 1326 | 11.4 | 1077 | 6.1 | 776 | 9.5 | 202 | 10.9 | 78 | 9.5 | 38 | 11.2 | 474 | 5.3 | 524 | 10.5 | 360 | 10.3 | 251 | 9.1 | 107 | 10.6 | 52 | 10.9 | 5 | 15.2 | 1 | 19.75 | | |
| **2010** | 11152 | 11.4 | 9218 | 9.9 | 7712 | 13.3 | 989 | 11.2 | 528 | 13.9 | 432 | 14.6 | 4066 | 10.3 | 3313 | 11.3 | 1774 | 10.9 | 1336 | 12 | 543 | 13.1 | 325 | 11.5 | 18 | 14.8 | 4 | 16.8 | 2 | 14.8 |
| **2009** | 12378 | 11.4 | 9955 | 10.8 | 8066 | 13.9 | 1218 | 12.3 | 531 | 14.5 | 435 | 16.5 | 4677 | 10.1 | 3394 | 13.3 | 1799 | 11.7 | 1314 | 12 | 552 | 12 | 394 | 13 | 18 | 16.9 | 10 | 15.7 | 2 | 16.9 |
| **2008** | 13814 | 13 | 9859 | 14.9 | 7848 | 14.9 | 1529 | 16 | 575 | 14.7 | 514 | 16.6 | | | | | | | | | | | | | 23 | 18.9 | 4 | 18.7 | | |
| **2007** | 14862 | 15.1 | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | |